



ԿԻՍԱՄՄԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

47^{րդ} ՏԱՐԻ ԹԻԻ 1

ՆՈՐ ՇՐՋԱՆ

5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1898

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ




Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՃԻՎԷԼԵԿԵԱՆ

Պապը Ալի ճատտեօի, քիւ 20

ԱՌԱՋԻՆ ԹԻՒ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Ընթերցող հասարակութեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մտաւորական կեանք

ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

Հին օրեր եւ հին օրերու մարդը Յովնանէս Պրոսպեր
Տերոյենց Յ. Գ. Մ.

ՕՏԱՐ ԷՉԵՐ

Իրականութեան ուր

ԹԱՅՄՁ

Դերասանահին (վեպ)

ԼԵԻՈՆ ՍԵՂՈՍԵԱՆ

Սիրոյ երկսեռ ըմբռնումը

ՄՈՆԹԵԿԱՅՅԷ

Բօլ վեպէն

ՍԻՊԻԼ

Լեւրան Դիցուհին (Բանաստեղծութիւն)

ՌՈՒԲԷՆ ՋԱՐԴԱՐԵԱՆ

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՐՀ

Մեր ընկերութեան լաւագոյն կէսին

Մ. Շ.

Կիներուն հագուստը տան մէջ

ՆԱՐԿԻՍ

ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ՀԵՑ

Մանուկներու խաղին հոգեբանական կողմը

Գրական շարժում

Տնտեսական կեանք եւ քաղաքականութիւն

Մ. ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

ՄԱՍԻՆ

ԿԻԱՄԱՐԱՇԱՅ  ԳԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

Մ Ի Ք Ա Յ Է Լ Շ Ա Մ Տ Ա Ն Ճ Ե Ա Ն

ԿԱՆՈՆԱԻՈՐ ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Արամ ԱՆՏՈՆԵԱՆԻ, Յովհ. ԳԱԶԱՆՃԵԱՆԻ, Տոքթ. ԴԱԻԻԹԵԱՆԻ, Ռուբեն ԶԱՐԴԱՐԵԱՆԻ,
ԹՂԿԱՏԻՆՅԻ, ՄՈՒՇԵՂ ՎԱՐՊԱԿԵՍԻ ԱՐԱՄԷԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ, ԼԵՈՆ
ՍԵՂԲՈՍԵԱՆԻ, ՍԻՊԻԼԻ, Տոքթ. Մ. ՎԱՀԵԻ, Տ. Ք. Ի, Ստեփան
ՔԱՐԲՈՒԹԼԵԱՆԻ, Տոքթ. Պողոս ԲՕԼՕԼԵԱՆԻ, և Ուրիշներու:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵՇՐՁԱՆ

(48^{րդ} ՏԱՐԻ)

1898 ԴԵԿՏ. — 1899 ԴԵԿՏ.

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՊԱՅՊԸԼ ՀԱՌԻՋ

ՏԱՐՐԱԼՈՒԾԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՕԴՈՒԱԾՆԵՐՈՒ

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ		Էջ	ՎԷՊ, ՆՈՐԱՎԷՊ, ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ	
Մտաւորական կեանք	Միքայել Շամտանճեան	2	Դերասանութիւն	Լեւոն Սեդրոսեան 10 40 75
Նախնական կրթութիւն	»	34		124 145 191 219 269 315 341
Մեր աղքատները	»	66	Սիրոյ կալանդ	Աբամ Անտոնեան 85
Մեր հարուստները	»	106	Հին կեանքեր (Անուշն ու Մանուշը)	Մարա 243
Պատրիարքարանը եւ Ազգ. Ժեմները	»	138	Հոգիներու յարութիւնը (Աւետարանական պատմութիւն) Տ. Ք.	251
Ինչո՞ւ չենք յաջողիր	»	170	Բանջօֆները	Գլանիկ 333
Տիրութեան դէմ	Տ. Ք.	202	Վրիպանքը	Սիպիլ 350
Հայ կղերը	Միքայել Շամտանճեան	234	Վերջապոյտէն ետքը	Աբամ Անտոնեան 374
Համոզումը եւ պարտաւորութիւնը	Արզոս	298	Ուրուականներ	Հենրիք Իպսէն (Թարգմ. Գերմ. է Մ. Շամտանճեան 385 419 461 510 566 592
Փոխան ծաղկեպսակի	Մ. Շ.	330	Վարդավառ, վերաբեր կատար	Աբամ Անտոնեան 476
Քիչ մը կորով, քիչ մը մտածում	Միքայել Շամտանճեան	362	Ջոջ ջաշին պաշտամանը,	Աբամ Անտոնեան 525
Իզմիրեանցի կտակին առթիւ	»	394	Վախին ծնունդը	
Մեր վաղուան սերունդը	»	458		
Օգտակարը մեր գրականութեան մէջ	»	490		
Նորը, գեղեցիկը եւ օգտակարը	Սիպիլ	553		
Պոլսոյ մեր աղքատախնամները Տոքթ. Դաւիթեան	569			
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ				
Հին օրեր եւ Յովհ. Պրուսացի				
Տերոյնց	Յ. Գ. Մըմըրեան	5	Իրականութեան սէր	Թայմզ 8
Բօլ Վէնէն	Սիպիլ	17	Միջքի վիճի հարկւրամեակը	29
Հակազդեցութիւնը	Կարօ	111	Արձակագիրներու իշխանը	Աբամ Անտոնեան 58
Հիւանդ զրիչը	Պօղոս Քօլօյեան	365	Կառապան Հինշըլ (Թարգմ. Կ. Հաւարդմանի)	Մ. Շ. 60
Գաւառացի զրագէտը	Յովհ. Գազանճեան	382	Գեղարուեստներու դերը	98
Բնաշրջման օրէնքը	Տոքթ. Դաւիթեան	398	Պատի ազդերը	100
Հայ զրագէտը	Արտշս. Յարութիւնեան	402	Արուեստագէտը եւ քննադատը Հանրի Պիտու	113
Հէնրիք Իպսէն (Թատերագիր իմաստասէր) Ա.	Միքայել Շամտանճեան	410	Մտաւորական շարժումը Հաւարային Ամերիկայի մէջ	115
Հէնրիք Իպսէն (Թատերագիր իմաստասէր) Բ.	»	468	Պելժ կեանքն ու մտաւորականութիւնը	Աբամ Անտոնեան 151 174
Պիւհնէրի առիթով	Արտշս. Յարութիւնեան	556	Գրական շարժում	156 288
Մամուլը իբր քաղաքակրթող օսկան Ա.	Միքայել Շամտանճեան	558	Դարավերջիկ հիւանդութիւնները գեղարուեստներու եւ գրականութեան մէջ	Մ. Շամտանճեան 208 283
Մամուլին դերը մեր գրականութեան մէջ Ա.	Աբամ Անտոնեան	562	Ռուսաւաճ գրականութեան	
Յոռետեսութիւնը բժշկութեան առջեւ	Պօղոս Քօլօյեան	575	Ալեքսանդր Ծատուրեան	Աբամ Անտոնեան 304
Քնարական բանաստեղծութիւնը մեր նոր գրականութեան մէջ	Արտշս. Յարութիւնեան	578	Յարութիւն Թումանեանց	» 434
Գաղափարի պէտքը գաւառի գրականութեան մէջ	Յովհ. Գազանճեան	588	Դերենիկ Դէմիրճեան	» 484
			Արդի ծատրոնը Յունաստանի մէջ	Բոսթանջիկ Մաքրիս 493
			ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆՆԵՐ Ա. (Ոչանաւոր)	
			Լեւոն Պիցուհին	Ռուբէն Զարգարեան 22
			Իրիկուան դաշնակուծներ	Շառլ Պոլուէն (Թրգ. Սիպիլ) 48
			Կորուած	Ստեփան Գարբուրեան 49
			Պատշգամին աղջիկը	Յովհաննէս Գազանճեան 55

Կասկած	Ռուբեն Զարդարեան	75
Սիրոյ երգեր	Կարո	89
Քանթիլէն	ԺանՄոռէաս(Թրգ.Սիպիլ)	97
Լերան հովուհին	Վարդ-Մելիք	128
Դաշնակը	Կարո	129
Պաշտումը	Մսեր	185
Նայումաքը	Կարո	216
Մարդուն լացը	Աղեք. Փանոսեան	281
Նարկիլէն	Գրիգոր Զօհրապ	368
»	»	368
Յայկերգ	Կարապետ Ոսկեան	373
Հոգւոյ ծաղիկը	»	407
Յիշէ զիս	Ալիսաւան	409
Տարտամը	Եղուարդ Գօլանճեան	432
Անհունը	»	432
Քայքայումը	»	433
Նիւթին ձայնը	»	467
Սպասում	Վահան Թեքեան	467
Լինել հէքեաթը	Ստեփան Քարբուրեան	504
Ցաւ	Արտշս. Յարութիւնեան	532
Վայրկեան մը	»	532
Սօնէ	Վահան Թեքեան	533
»	Հանրի Պեք (Թրգ.Վ.Թ.)	536
Վայրկեաններ ու վանկեր	Արսէն Մոլար	600
Խզուած շարեր ու քրքռուն քեղեր	Կարո	
Յուաշաբանի փոխարէն		145
Սառը		149
Զինը		150
Զանձոյթ		179
Ուրուանկար		179
Հայկներ		180
Շուշանը		217
Մանիշակի փունջ		217
Վերջին պատրանք		218
Անդրադարձութիւն		264
Սիրաբանութիւն		265
Տարակոյս		266
Սրբապղծութիւն		267
Հրաժարում		628
Պըճըռկած կարծ		321
Պրիմակ		322
Նուէր		322
Պատրանք		348
Սիրականին		349
Տարրալուծում		380
Վերջալոյսի պահուն		381
Ամպերուն		444
Գիշերային երանգներ		445
Տաղարան	Հոյր Հայրան	
Ներածութիւն		
Ա. Ինչ է բանաստեղծութիւնը		204
Բ. Բանաստեղծութիւնը կը մեռնի		205
Գ. Անձնական եւ անանձն բանաստեղծութիւններ		247
Հրայրք մուծին		249
Խօսք ընդ Աստուծոյ		313

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ Բ. (Արժակ)	
Յիշատակներ	Յ. Գ. Մըմըրեան
Ա. Առաջին ձիւնն ի կունտ	
Գատոր	44
Բ. Սաւոթն ու իսրայէլը	369
Հին օրերու մեծ պահքը	Սկեպտիկ
Տեղատարափը	Յովհ. Գազանճեան
Մանիշակ	Վահան Թեքեան
Հովիւին իղձը	»
ԽՈՂԵՐ	Սկեպտիկ
	47 119
	144 190 207

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՐՀ

Մեր ընկերութեան լուսագոյն	
Կէսին	Մ. Շ.
Կինեւուն հազուատը տան մէջ	Նարկիս
Կնոջ գեղեցկութիւնը	Տոքք. Դաւիթեան
Ժամանցը ընտանիքներու մէջ	Նարկիս
Զղային կինը	Տոքք. Դաւիթեան
Կիներու անհատականութիւնը	Նարկիս
Պէտք է զրագէտները ամուսնանան	
Ե. Ճ. Հարտի	130
Առողջապահական օրէնքներ	
Զղանութենէ զերծ մնալու համար	Տոքք. Դաւիթեան
Հիւանդանոցին ինպատ	
Նուագահանդէսին առթիւ	Նարկիս
Զղային կնոջ առողջապահութիւնը	Տոքք. Դաւիթեան
Կնոջ ժողովի առողջապահութիւնը	
»	»
Ի՞նչ պէտք է ընեն մեր կիները	Նարկիս
Նոր կինը	Սիպիլ
Կանանց շարժումը Շուէտի մէջ	Քեքե Ծիրմախեր
Կանանց շարժումը Ռուսիոյ մէջ	»
Կանանց շարժումը Մեծին Բրիտանիոյ մէջ	»
	582

ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ՇԵՏ

Մանուկներու խաղին հոգեբանական կողմը	
Մանուկներու երեւակայութիւնը	Մ. Շ.
Ընթերցանութիւնը մեր դպրոցներուն մէջ	Մ. Շ.
Մանուկներու վախը	181
Մանուկներու հաճոյքի զգացումը	212
Մանուկներու համոզոյթին զարգացումը	
»	293
Մայրը իրրեւ ֆիզիքական կրթիչ	
Հերման Քլեքքե	442 535

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԻՏԷԱԼՆԵՐ

Ուսուցման բարեփոխում	Ժիւլ Լլամբըր
	141
ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ	
Երկրագունդի կազմութիւնը	
տիեզերքի մէջ	94

Խնդիրուն հիւժախտը	Տոքք. Պողոս Բօլօլեան	121
Երկրագունտը տիեզերքին մէջ		289
Ծովի բաղնիք	Տոքք. Կալիքեան	390
Խեղազարուծիւն	Տոքք. Սանտալճեան	448
Հանճար եւ խելագարուծիւն	Կ. Բ.	601
Անձեւ հեռաձայնը		542

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆՆԵՐ

Ս. Փրկչի Յիմարանոցին շուրջ	Տոքք. Պողոս Բօլօլեան	258
Բաց նամակ եղիա Տէմիրճի-պաշեանին	Արամ Անտոնեան	262
Գրամարտ Առ Արամ Անտոնեան	եղիա Տէմիրճիպաշեան	300
		338
Բացատրութիւն մը	Մ. Շամտանճեան	406
Պատասխան մը	Տոքք. Մ. Վահէ	481
Դաս մը	Արամ Անտոնեան	498
Դրչի մը անկումը	Յովհ. Գազանճեան	508
Գրական դիմաստուերներ		
Ա. Եղիա Տէմիրճիպաշեան	Ա. Յարութիւնեան	473
Բ Սիպիլ	"	505
Գրադասական		
Ա. Ծննդական գործարանը,		
գրեց Տոքք. Տադևարեան	Տոքք. Մ. Վահէ	440
Բ. «Գիշուծիւն» Թրգմ. Գերմ. է		
«Մանչերու թշնամին» գրեց		
Յովհ. Տէր Ստեփանեան	Տոքք. Մ. Վահէ	565
Վերջին հրատարակութիւններ		539
ԲԱՐՔԵՐ ՈՒ ՎԱՂԱՓԱՐՆԵՐ	Սկեպտիկ	450 537

ՋԱՆԱՋԱՆՆԵՐ

Որոյ երկսեռ ըմբռնումը	Մոնդէկացցա	15
Ամանոր. տօներու հոգեբանու-		
ծիւնը մեր մէջ	Տ. Ք.	71

Ընտանիք մը	Ջարմար Սահակեան	73
Ուխտի տղան	Մուշեղ վարդապետ	158
Աւելի բաղձային	Թլկատինցի	239
Կարճ նամակ Բարիզէն	Պողոս Բօլօլեան	446
Բաց նամակ	Տոքք. Մ. Վահէ	521


ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԵՒ ՄԻԱԶԳԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒՅԻՆ

Տնտեսական եւ քաղաքական		
սկզբունքներ	Մ. Շ.	31
Միացեալ նահանգներ	Մ. Շ.	62
Գաղթավայրերու քաղաքա-կանութիւն	Մ. Շ.	101
Եւրոպայի նիզակակցութիւն-ները	Մ. Շ.	134
Ֆրանսայի հանրապետու-թեան նախագահի մահուան առիթով	Մ. Շ.	167
Շաբարի արտադրութեան ա-պագան Եւրոպայի մէջ	Եուլիուս Վօլֆ	195
Միջազգային քաղաքականու-ծիւն	Մ. Շ.	229
Չէքոսլոնիացիներու դեպքանա-խորհուրդը	Մ. Շ.	295
Ռուս եւ Անգլիական համա-ձայնութիւնը	Մ. Շ.	325
Միջազգային իրաւախօնու-ծիւն	Մ. Շ.	354
Միջազգային կացութիւնը	Մ. Շ.	453
Տրիֆլիսի խնդրին հոգեբա-նութիւնը	Արամ Անտոնեան	543
Թրանսիլի հանրապետու-ծիւնը (պատմական էջեր)		603

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԱՅՐԲԵՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

ԱՆՓԱՍԼԱՆ	409	218, 264, 265, 266,	453, 458, 468, 490,
ԱՆՏՈՆԵԱՆ (Արամ)	58, 85, 151	267, 268, 321, 322,	558
	174, 262, 304, 374,	343, 349, 380, 381,	ԶԻՐՄԱՆԵՐ (Բէքէ) 429, 517, 582
	434, 476, 484, 498.	444, 445	ՈՍԿԵԱՆ (Կարապետ) . 373, 407
	525, 543, 562.	ՀԱՐՏԻ (Է. Ճ.) . 130	ՊԷՔ (Հանրի) . 536
ԱՐԳՈՍ . 298		ՀՈՐԻ-ՀԱՅՐԱՆ 204, 205, 247,	ՊԵՏՈՒ (Հանրի) . 113
Ա. (Կ.) . 601		249, 313	ՊՈՏԷՆ (Շառլ) . 48
ԳԱԶԱՆՃԵԱՆ (Յովհաննէս) 55,		ՄԱՐԱ . 213	ՍԱՀԱԿԵԱՆ (Ջարմար) . 73
382, 401, 508, 588.		ՄԱՔՐԻՍ (Բոնաքանդին) . 493	ՍԱՆՏԱՆՃԵԱՆ (Տոքք.) . 448
ԳԼԱՆԻԿ . 333		ՄԵՐՄԵՐԵԱՆ (Յ. Կ.) 5, 44, 369	ՍԵՂԱՐՈՍԵԱՆ (Լեւոն) 10, 40, 75,
ԳՕԼԱՆՃԵԱՆ (Եղուարդ) 432,		ՄՈՒԱՐ (Արսէն) . 600	124, 145, 191, 219,
433, 467		ՄՈՆԻԿԱՅԱՅԱՆ . 15	269, 315, 341
ԴԱՆԻԹԵԱՆ (Տոքք.) 50, 80, 160,		ՄՈՒԼԱՍ (Ժան) . 97	ՍԵՊԵՐ . 17, 350, 427, 553
224, 277, 320, 356,		ՄՈՒՇԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ . 158	ՍԿԵՊԵՐ 47, 119, 144, 190, 207,
398, 569		ՄՍԵՐ . 185	241, 450, 537
ԶԱՐԴԱՐԵԱՆ (Ռուբէն) . 22, 75		ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ (Արտաշէս) 402,	ՎԱՀԷ (Տոքք. Մ.) 440, 481, 521,
ԶՈՀՐԱՊ (Գրիգոր) . 368		473, 505, 532, 556,	565
ԹԱՅՄՉ . 8		578	ՎԱՐԴ-ՄԷԼԻՔ . 128
ԹԷՔԷԼԵԱՆ (Վահան) 417, 418,		ԶԱՐԿԻՍ 24, 58, 83, 165, 323	ՎՕԼԵ (Եուլիուս) . 195
467, 533		ԶԱՄՏԱՆՃԵԱՆ (Միքայէլ) 2, 23,	ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ (Եղիա) 300, 338
ԹԼԱՆՏԻՆԵՐ . 239		31, 34, 56, 60, 2,	ՓԱՆՈՍԵԱՆ (Աղիք.) . 281
ԻՊՍԷՆ (Հեքիք) 385, 419, 461,		66, 90, 101, 106,	Ք. (Տ.) . 71, 202, 251
510, 566, 592		134, 138, 167, 170,	ՔԱՐՔՈՒԹԻՆԵԱՆ (Ստեփան) 49, 504
ԼԵՄԷՐ (Ժիւլ) . 141, 186		208, 229, 234, 283,	ՔԼԷՆՔԷ (Հերման) . 442, 535
ԿԱՐՕ 89, 111, 129, 149, 150,		295, 325, 330, 354,	ՔՕԼՕԼԵԱՆ (Պողոս) 121, 258,
179, 180, 216, 217,		362, 394, 406, 410,	365, 446, 575



ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

47^{րդ} ՏԱՐԻ ԹԻԻ 1

ՆՈՐ ՇՐՋԱՆ


5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1898

ԸՆԹԵՐՑՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Տեշական գործ մը մեջտեղ հանելո՞ւ հաստատ ուրոշումով կը սկսինք հրատարակութիւնը կիսամետայ “Մասիս”, ինչ, ասով աշխատելո՞ւ համար երկար ատենէ ի վեր զգացո՞ւած մեծ պակաս մը լրացնելո՞ւ:

Առօրեայ կեանքին օգոշումները ի վեր հանել, զարգացնել միտքը մեր ընթերցողներուն եւ իրենց ձաշակը կրթելով ազնուացնել զգացումները, պիտի ըլլայ կիսամետայ “Մասիս”, ինչ հետեւելիք ուղղութիւնը:

Ընթերցանութիւնը իր տահմանափակ շրջանէն աւելի լայնցնելո՞ւ համար ամեն ջանք պիտի ըլլայ, քերքը հրապոյրիչ եւ ժողովրդական դարձնել:



Մ Տ Ա Ւ Ո Ր Ա Վ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

Մ Ի Ք Ա Յ Է Լ Շ Ա Մ Տ Ա Ն Ճ Ե Ա Ն

Ժամանակակից մամուլը եւրոպայի, և մասամբ ալ մեր մէջ՝ ժողովրդի մը զանազան անհատներուն միջեւ յարաբերութեան միջոցներէն մէկն է։ Օրուան մամուլի միջոցաւ է գլխաւորաբար որ այսօր տեղի կ'ունենայ ամեն ուրեք մտքի արտադրութեան ու գործնական՝ օրը օրին պահանջներու մտաւոր փոխանակութիւնը։ Որքան լեցուն ըլլայ հանրային կեանք մը, նոյնքան պէտք է որ նոյն հասարակութեան համար անհրաժեշտ եւ զոգ փոխանակութեան միջոցները բազմապատկուած ըլլան, կամ փոխադարձաբար կատարելագործելով յարաբերութեան բոլոր միջոցները պէտք է ասով հանրային կեանքը աւելի լեցուն, աւելի բեզուն դարձնել։

Որպէս զի օրը օրին ելող նիւթական կեանք մը զարգացման ճամբուն մէջ մտած ըլլայ, անհրաժեշտ է որ հազարակիցութեան բոլոր միջոցները կազմակերպուած վիճակի մը մէջ դրնուին. նմանապէս կազմակերպուած մը տաւորական կեանք մըն ալ պէտք է որ կազմակերպուած միջոցները ունենայ հասարակութեան մը անհատները մտաւորապէս իրարու հետ յարաբերութեան մէջ դնելու համար։

Մտաւորական կեանքի մը հիմունքը ընտանիքը և դպրոցներն են, իսկ ըն-

տանիքէն և դպրոցներէն ետքը տաղաւրութիւնն ու մամուլը ժողովրդի մը համար այն միջոցներն են, որով անհատները իրենց մտքի արտադրութեան հետ ամբողջ հասարակութիւնը յարաբերութեան մէջ կը դնեն։ Մեր մէջ տաղաւրութիւնն ու մամուլը գիտակցած են կատարելապէս իրենց այդ դերին, ասով իրենց նշանակութիւնը նաեւ ընդունել տալով հասարակութեան։

Մտաւորական կեանքի մը հիմունքը մեր մէջ, չունի արդէն այն հաստատ վիճակը որով կարելի ըլլայ անոր վրայ ճշմարիտ քաղաքակրթութեան մը շէնքը բարձրացնել։ Մեր ընտանեկան կեանքը և դպրոցները հիմնական փոփոխութիւններու կը կարօտին։ Մեր ընտանիքները և դպրոցները — թող ըլլան միայն նախակրթարանները — բարուրելով միայն կրնանք յուսալ, թէ մենք ալ պիտի մոնենք վերջապէս զարգացման ճշմարիտ ճամբուն մէջ որուն վրայ կեանքի երջանկութեան և յաջողութեան ծաղիկները առատ ցանուած են։ Ընտանեկան և դպրոցական լուս կազմակերպութենէ մը վերջը պիտի սկսինք գիտութիւնն ու լրջութիւնը գնահատել մեր բոլոր գործերուն մէջ, ու աշխատութիւնն ու շահագրգռութիւնը մեզի առաջնորդ, ուրիշ շատ մը բաներու հետ պիտի կրնանք նաեւ տալ մեր տաղաւրութեան և մա-

մուլին այն հանրագումարները որով միայն արդարանալի է իր գոյութիւնը :

Տգէտ ժողովուրդ մը ծոյլ ժողովուրդի մը պէս միութիւններու որրանը միայն կրնայ ըլլալ :

Եթէ պահ մը անդրադառնանք պիտի տեսնենք թէ մտաւորական կեանքի ինքնուրոյն հրապարակ մը չունինք մենք, յատուկ ճաշակով ու յատուկ ձգտումներով : Գիտական ազդ մը չենք եղած երբէք, մեր դատողութեան մէջ խոհուն և հեռատես մեր ձեռնարկներու ատեն : Օրը օրին ապրող կեանք մը եղած է մեր մտաւորական կեանքը, և մեր մտաւորական գործունէութիւնն ալ եղած է միայն օրուան մը համար, առանց համոզումի : Վաղորդայնը երբէք զբաղեցուցած չէ մեզ գիտականապէս, ու այսօրուան մեր յախուռն, անխոհմոգեւորութեան մէջ, միշտ անգիտակից մեր վտղուան դժբախտութիւնը դարձնած ենք : Յաճախ ուզած ենք կրթել մեր սերունդը և տգէտ եղած ենք բոլոր այն կրթական սկզբունքներուն որոնք 19րդ դարու քաղաքակրթութիւն մը կերտած են :

Մեր կրթական գործերու արդիւնքը եղած է ընդհանրապէս, կեանքի կռուին մէջ բռնուող շատ մը դժգոհներու վրայ աւելցնել, տարուէ տարի, երամակը նոր դժգոհներու, որոնք իրենց անգործնական, առանց փորձառութեան կրթութեամբը, չի պիտի կրնան բնաւ իրականութեան մասին կատարեալ դատողութիւն մը ունենալ :

Քաղաքակրթութիւնը խորհուրդներու մէջ փաթթուած անբաժնելի պարիկ մը չէ, այլ պարզապէս բոլոր հեշտացուցիչ միջոցները այն կռուին զոր մարդկային ընկերութիւնը ստիպուած է մղել ամեն օր ապրելու համար : Ամենէն աւելի քաղաքակրթուած են այն ժողովուրդները, որոնք ամենէն շատ միջոցները ունին իրենց կեանքի կռիւը աւելի

հեշտութեամբ կատարելու : Քաղաքակրթութեան պատմութիւնը կը սորվեցնէ մեզ թէ մտաւորական կեանքի աստիճանական զարգացումը տուած է միշտ նոր միջոցներ մարդկային ընկերութիւններուն, որով կեանքի կռիւը աւելի հեշտացած է : Կեանքի կռիւին հեշտացումն ալ ուրիշ բան չէ բաց եթէ կեանքի մէջ երջանիկներու, յաշոգածներու թիւին աւելնալը :

Մեր մտաւորական կեանքը, գիտակցութեամբ դատողներու համար, միաթարական վիճակ մը ունենալէ շատ հեռու է դեռ : Ինչպէս կ'ուզէք բարդաւաճ մտաւորական կեանք մը ունենալ երբ տնտեսական սկզբունքներն ալ, որոնք հասարակութեան մը նիւթական կեանքին խարիսխն են, տակաւին այնքան սխալ ըմբռնուած են մեր հասարակութենէն : Սակայն նորէն մեր մտաւորական կեանքին հետ բազմադատելով մեր տնտեսական կեանքը աւելի կազմակերպուած վիճակ մը ունի :

Մեր տնտեսական կեանքին աւելի բանաւոր կերպով կազմակերպուած ըլլալը, սակայն, չեմ հաւատար որ գիտակցութեամբ, համոզումով եղած ըլլայ, որովհետեւ այնքան կը պակսի համոզումն ու գիտակցութիւնը մեր մէջ : Տնտեսական կեանքի սկզբունքները միայն ստամոքսի խնդիր մը չեն, այլ հանրութեան մը նիւթապէս բարդաւաճման օրէնքները : Տնտեսական սկզբունքներով ալ սահմանափակ, մեր տնտեսական բովանդակ գործունէութեամբը, նեղ կերպով ստամոքսի պահանջն է որուն անսպով բան մը կ'ընենք : Այն օրէն աւելի մեծ երջանկութեան մը տէր պիտի կրնայիք ըլլալ երբ սկսէինք գիտակցիլ տնտեսական կեանքի օրէնքներուն իւրաքանչիւր ընկերութեան զարգացման մէջ ունեցած մեծ դերին : Փոխանակ նիւթապաշտի ձախորդ ըմբռնումով արհամարեւ մը

մտաւորական կեանքն ու այդ կեանքին աշխատակորները, որոնք հանրային նիւթական յաջողութեան մը սերմերը կուտան միշտ, պէտք էր որ քաջալերէինք զիրենք:

Շատ յատկանշական է մեր մտաւորական կեանքին համար Ուսումնական Խորհուրդի բարոյական գիրքն ալ: Յաջա շատերուն չունի այն նոյն նշանակութիւնը ինչ որ տրուած է պատրիարքարանի միւս Խորհուրդներուն, Ուսումնական Խորհուրդ մը բացի երկշաբաթեայ պարբերական նիստերէ և իր նիստերուն մէջ վարժապետներու քանի մը վէճեր կարգադրելէ, կրնար մեր նախնական կրթութեան լուրջ կերպով բարձրման գործը ձեռք առնել, ու ասով իրապէս ստանալ այն գիրքը որ միայն վայել է իրեն: Նոյն ազիտութիւնն է հոս ալ մեզ անգործութեան դատապարտողը:

Մեր դպրոցներու և վարժապետներու ներկայ տխուր կացութիւնը երբէք չի խռովեր մեր հասարակութեան խղճմտանքը: Ոչ թէ միայն դուրսը, այլ նոյն իսկ դպրոցական յարկերու տակ և վարժապետներու շրջանակին մէջ, գիտութիւնը, իբրեւ ընկերական բարիք մը դեռ չէ գնահատուած: Ազգային մատենադարան մը ունինք որուն շուրջ միայն յանձնաժողովներ կազմել գիտենք:

Մեր հասարակութիւնը, ընդհանրապէս իրողութեան մը արտաքին գեղասիրութիւնը (dilettantisme) միայն ունի, հեռու բոլոր իրողութիւններու ներքինը թափանցելու կաւոյութենէն: Մեր մշտաւորական կեանքին մէջ տիրող ազիտութիւնը հրաշքի մը արդիւնքը չէ, այլ հետեւանքը մեր յուսահատեցնող կերպով յոռի նախնական կրթութեան, որով դպրոցէ ելնողները անկարող ամենակենսական բան մը պէտք եղածին պէս հասկնալու, բարձր գիտութիւններ

ու և խնդիրներու գեղապաշտներն (dilettant) են միայն: Գիտութեան՝ բան մը էապէս ճանչնալու պտուղը զմեզ չէ հրապուրած, գիտութեան ծառին պէս:

Մեր լեզուին ներկայ վիճակն ալ ապացոյց մըն է թէ մենք գիտականապէս կազմակերպուած կեանք մը չունինք: Արեւմտեան հայերու աշխարհաբարը գեղարուեստական բոլոր նրբութիւնները արտայայտելու ճիւղնութիւնը ստացած է, գրական, գեղապաշտ լեզու մըն է արդէն անիկայ, իսկ գիտական լեզու մը չենք կրնար նկատել մեր աշխարհաբարը, որուն գիտական բացատրութիւններ, և արդէն ընդունուած բառերու ալ գիտական ճշգրտութիւն կը սրկալին: Այս բանը կը զգան ամեն անոնք, որոնք կը փորձեն եւրոպական լեզուէ ու և է դուստ գիտական էջ մը թարգմանել մեր լեզուին:

Բովանդակ մտաւորական կեանքի, գեղարուեստներու, ընկերական զարգացման հիմունքը գիտութիւնները միայն կրնան ըլլալ. ասիկայ պէտք է ընդունինք իբրեւ բացարձակ ճշմարտութիւն մը: Ներկայ դարու քաղաքակրթութիւնը այս ճշմարտութեան ըմբռնելովը միայն կրցած է գոյութիւն ստանալ:

Պէտք է վերջապէս մենք ալ սկսինք հակազդելու (réaction): Մեր դպրոցներուն մէջ բնական գիտութիւնները պէտք է շատ աւելի խնամով աւանդուին, և դրականութեան ու ընդհանրապէս գիտական գասերն ալ պէտք է գիտական լրջութիւն մը ստանան մեր դպրոցներուն մէջ: Գիտական շիղջ, մտաւորական կեանքի կեդրոնը, պէտք է որ ընկերական գործարանաւորութեան մէջ հետզհետէ աւելի ամրանայ, Ասով շատ մը չի հասկցուած սխալներ ինքնիրեն պիտի դարմանուէին:

Գիտութիւններէ առաջ եկած, ամեն իրողութիւններու և երեւոյթներու գիտակից մտաւորական կեանք մը պիտի փոխէր մեր բարոյական հրապարակը եւ զմեզ կեանքի մաքաւումին մէջ կարող եւ ձեռներէց անհատներ պիտի դարձնէր:



ՀԻՆ ՕՐԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՐՈԻՍԱՑԻ ՏԷՐՈՅԵՆՑԸ(1)

պարծանք մը . Տերոյե՛նցն ալ իրենցմէ եր :

Մեր դստն , ուրկէ ներս մտաւ , յատուկ դիտումով ճարտարապետութեամբ էր տեղեկ բարձրութեամբ մը , վասն զի այդ դուռնէն ներս մտնողներն ընդհանրապէս երկայնամիտ ու երկայնահասակ մարդիկը պիտի ըլլային :

Այդ հսկաներուն ամէնէն պատկառելին էր Տէրոյենց պատուելին՝ ոչ միայն իր բազմահմտութեամբն եւ աններող անդրդութեամբը , այլ նաեւ իր թիկնաւէտ հասակովը , երկայն-Միքայէլ աղան կը զէր զինքը : Ես այդ առաջին զիշերն ամէնէն բարձրորակ մերձը տեսայ զինքը . մտեղ , շիտակ , մովստական երկայնահասակութիւն մը . քաջողջ , կորովի իրան մը՝ քրիստոնեայ լուկութեամբ պարուրուած սառակ հանդերձի մը մէջ — լայն ու դունատ տափառ մը , լանջապահ բաճկոն մը , երկայն քիւրք մը — : Իր քահանայապետական անմօրուս դէմքը , որուն լուրջ եւ սպիտակ ընչացքը եւ արծուական քիթը ծանր վայրէջքով մը կըստուերէին իր լայն կարի՛ լայն բերանը , ունէր սիւնհոգական խիստ լեցունութիւն մը . խոր , փայլուն , գիր աչքերուն մէջ բոցի պէս կը վառէր՝ ծերութեան մէջ հազուադէպ՝ սուր բայց զուարթ խորագիտութիւն մը . թաւ ու թանձր յոնքերուն վրայ միայն թառած էր վանական խոփոռութիւն մը : Ծերութեան մէջ անգամ կոյս ճակատք՝ ոչ շատ խորշմած ոչ շատ պարզ՝ ունէր հին հայու օծութիւն , ուր միւռնոնէն ու լոկ ջուրէն զտտ ուրիշ հեղուկ չէր հալած : Եւ այդ մատեան ճակատին վրայ կամքառնար պատարուն գլուխի մը քաղեալ գագաթը , զոր չէր ճնշած երբէք ասկղիպեանի մը ձեռքը , գանկ մը աշտարակածեւ՝ իբր կրկնապատկումը դէմքին , որուն վրայ կաղապարուած էր լայն ֆէս մը ամիրայական :

Այն ատեն կարճ Խոթանասուննոց մը , իր այդ յաղթ մարմնացումը պիտի նմանցունեմ ես բարձր սօսիի մը , որուն նմաններն յաճախ կը տեսնենք քաղաքներու եւ գիւղերու արահետներուն վրայ , եւ որ՝ հինցած տարիներու կոթողներ՝ կը քամահրեն նոր ժամանակներու հետ նոր մրրիկներն ու փայտատները , ձմեռներն եւ շուրջ փթթումները . ու կաճին մենիկ՝ անյարգար ան-

յողողողութեամբ կանգաղած : Անոնց շուքին տակ կիջեւանին կարաւաններ , որ կը սիրեն միշտ հին ճամբէն քայլել . անոնց լայնատերեւ շրշիւնները կը ներդաշնակեն աղքատիկ արահետին գեղջուկ հրթեւեկները . անոնց հովանին ապաստան է նորէն դժգոհ հին ու ինկած մարդոց , որ ծալուպատիկ հոն նստած կը հաղորդեն իրարու իրենց վէպերն ու տրտունջները , ու անոնց շուրջը կը բուսնին , կը ծլին , կ'աճին ու կիյնան բնութեան անդգալի ու հետեւան մէկ կատակով փոքրիկ տունկեր ու ծառեր : Երբեմն անոնց վրայ փորուած են խորհրդաւոր գլխազրեր ալ , որ կը մատնեն առեղծուած զրոյցներու հետ խառնուած փորձ անցորդներու հաւատքը թէ՛ այդ սօսիները պիտի տեսնէր դեռ քանի մը քառասուն տարիներ՝ մինչ իրենք պիտի սահին երթան . մահկանացու մարդկութեան կարճ օրերուն միւլթարանք երկարակեացներ , որ կոյս բնութեան ծոցէն բնական կենցաղով մը ջովցած ամբարձած պատկերազիր ուղեքճներ՝ մըն են ի փառս բնութեան ու Հաստիւն , տարեւոր յիշատակներ՝ շիտակ կեանքի բարի շատակեցութեան :

Այդ հին կենդանագիրով ահողեմական էր՝ որ կը նախապահէր շատ անգամ Իճատիյէի աղաներուն աղումինն եւ անոնց մէջ իր խօսքը միշտ վերջինն ու վճռականը կ'ըլլար պատմականի ու մատենագրականի մասին : Իրեն տեղի կուտային ամենէն մեծամիտները , մեծատուններն ու անձնավստահներն անգամ՝ նոյն իսկ հայրս՝ որ ունէր հինցած ունակութիւն մը վերջին խօսքը սիրելու : Տէրոյենց չէր զիտեր աչառել . պատկառանք կը բերէր միշտ իր հետ :

Աւելի տղայ հասակիս սիրուած առասպելներու մէջ՝ իր մասին լսածներս ըրած էին վրաս շատ խոր տպաւորութիւններ : Եկեղեցական կարգի այն չարածճի տիրացուներէն , որ մասի խուցէն , բանկալէն , պահարաններէն մինչեւ խորաններու խորշերը՝ նուիրապետական թոյլտուութեամբ մը կասպատակեն ու կ'երթեւեկեն արձակ համարձակ՝ լսած ալ էի յաճախ թէ ժամանակին ամենէն գիտնականն ու բազմալեզուն էր Չամուրճեան պատուելին . բունած էր Ալֆայէն մինչեւ Օմեդան , տիրած էր 10-15 լեզուներու , լափած էր հա-

զարներով գիրք, դրած էր հարիւրներով ալ, կը մաքառէր ու կը յաղթէր հռոմէական ու բողոքական աստուածաբաններու եւ հրեայ բարբէններու հետ . ունէր նաեւ՝ սոսկալի բան՝ դեւերու գիտութիւնը, վարժապետած էր կաթողիկոսներու եւ, խայթիչ գրողի ⁽¹⁾ մը խօսքով, ինք անվեղար կաթողիկոսն իսկ էր ազդին, Վեցնագարեակ ալ գիտէր :

Սակայն իր գրուածներուն հետ իր փառաւոր համբաւն ալ այն ատենէն (1871) սկսած էր իյնալ նոր սերունդին աչքէն . իր վրայ լաւք նկատողները չէին կրցած երկար տոկալ իր վրայ զեղ գրուցողներուն դէմ, որ շատ ալ էին, բայց իր ներկայութիւնը դեռ պատկառանք կազդէր ամէնուն . վասն զի հին դպիրներէն միայն Տէրոյնցն էր՝ որ զերծ էր պատուելիական այն ազէտ կծկաւած չորութենէն՝ արտաքինայարդար հեղինակութեան մը սաստիկ ներքեւ ապաստանած, որ միակ արժանիքն էր վաղեմի վարժապետներուն եւ միակ կնիքը տիրող մոլութեան մը, — ծոյլ մեծամտութեան, չըսենք աւելին . Տէրոյնց՝ տանուէր ու հայր համեստ՝ ունէր իր տարազին մէջ նահապետական պարզութիւն մը, իր շուրթերուն վրայ գիտուն խօսունութիւն մը՝ խառնուած արեւելեան անզանազան համարձակութեամբ, որուն զարդն ու թերին ալ էր ներհուն եւ քիչ մը կծող ճշմարտասիրութիւն, եւ՝ այլոյն այլ՝ ու ոչին ո՛չ րոտու հոգիի հանապազօրոյ արիւթիւն մը : Իր գործերէն ալ առաջին անգամ հանդիպած եմ մէկ քանի հատոր Զօնալներու եւ մանաւանդ եկեղեցական կառավարութեան վրայ տետրի մը ու Իրաւախոնին, որուն հաշտ ու անզարդ

(1) Յարութիւն Սըվաճեան :

ոճը անգորրապէս կը սիրցունէ իր շռայլ ու սրամաքանող քառեր : Ես մանաւանդ իրաւախոններով յարած էի մատենագիր պատուելիին, եւ կուզեմ որ ընթերցողներս ալ այդ երեք հատորներովը ճանչնան զինքը ⁽¹⁾ : Ինք իբր միայն անոնց մէջ կը պատկերի իր ամենէն ազատամիտ լուսաւորչականութեամբն ու պաղարին դատողականովը . Վեցնայի հին Մխիթարեանները՝ իրենց ամէնէն մեծ ներկայացուցիչին, Հ. Յովսէփ Գաթրօնեանի միջոցով իսկ, յեն կրցած լի պատասխան մը կշռել պատուելիին իրաւախոնութեանցը՝ թեւեւ նիւթին իսկ բնութենէն ⁽²⁾ :

(1) Ժամանակին կրօնական խոգովին ստիպումովը խմբագրուած այդ բանաճնականները սպառած են . Գէորգ կաթողիկոս խոստացած էր հեղինակին նորէն տպագրել զայն, բայց իր կենդանութեան ատեն չէ կատարուած այդ խոստումը, որուն վրայ կը տրտնջէր ծերունի իրաւախոնը : Այդ չինիչ գրուածը մանաւանդ հռոմէական վարդապետներէն ու աշխարհականներէն ամենէն շատ կարդացուած է, հոն է որ պատուելին տեսական Հռոմի և տեսական Էջմիածնի մէջ քաշած է վերջին գործնական լեւթաման . հեղինակին կրտսեր հարազատին քով տեսած եմ օրինակ մը ճոխացած ձեռագիր յաւելուածներով ու գիտողութիւններով :

(2) «Կեղծիք իրաւախոնի» բազմաձևութեամբ գրելը զուգադրելէ ետեւ Տէրոյնցը մինչեւ իսկ Լայպցիցի բարձրութեան հետ, գէթ ըստ ոչ ամենայն երկայնութեան (կեղծիք իրաւ . Ա. էջ 119), անոր «Պատկառելի ծերութիւնը հռոմէական եկեղեցին հրաւիրելու իր յորդորները (նոյն անդ. էջ 16) ենթադրել կուտան պատուելին իր ընթերցողներուն սուղեւ խոստասիրտ մը, որ սակայն նոյն իսկ հանդուցեալ վերածպատուելի մատինադիրէն վկայեալ է (նոյն անդ. էջ 15) : Իբր մասնակի ուղասաւորող կրօնի և կաթողիկէ ճշմարտութեան՝ կրելով փոխարէն կտտանք գրիչի կտտանք լեզուի նաեւ գրամական զրկութներ : Եւ այսպէս չէ՞ր բաւեր . . . :



ՕՏԱՐ ԷԶԵՐ

ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԷՐ

(Թայմզ, 1 ռոտոն)

Հիմա ընդհանրապէս կը կարծուի թէ զիցերգութիւնը (épique) իբր զրական սեռ մը, արդէն իր օրերը անցուցած ըլլայ : Հիմա ամեն մարդ համոզուած կ'երեւայ թէ մէկը չի կայ որ զրական այդ սեռը մշակէ, եւ քիչեր են որոնք կը կարգան տակաւին մեզի աւանդուած Հոմերոսներու եւ Վիրգիլիոսներու տառնակ հեղինակութիւնները : Երեւակայութեան բողբոջները, եւ աւանդալիտական հեղինակութիւններու աղբերակները, որոնցմէ կեանք առած են բանաստեղծութեան այս սեռի աշխարհահռչակ գլուխ գործոցները, դժուարած են հիմա, ամենքն ալ : Ժամանակակից մարդկային կեանքը չափազանց բեռնաւորուած է արձակուանակ տաղտուկներով : ամեն բանի թափանցող գիտակցութիւն մը, չափազանց քիչ խնդիրներով մը քմահաճ խաղերու եւ անբաւական տգիտութիւնը հրաշալւոյն հանդէպ, ստեղծող հանձարներու համար ասպարէզ չեն ձգած : Իրիական, Ողիսական եւ Ենէական, մարդկային մտքի սոյն երեք կոթողները ուրիշ բան չեն, բայց եթէ ուժգին ջանք մը ըսելու համար մարդկութեան կեանքի պատմութիւնը : Զին ժամանակներէ յետոյ, Եւրոպայի մէջ ալ այս երեք գլուխ գործոցներուն կը պարտինք կրօնական երկու զիցերգութիւններու, « Երկնային կատակերգութեան » եւ « Դրախտ կորուստեայի » ներշնչումը :

Հոմերոսի, Վիրգիլիոսի, Տանդէի եւ Միլթընի անուններուն քով, ներկայիս մէջ, զիցերգու այս բանաստեղծութիւնը իր առաջին ցուքերը միայն կը փալիւէ : « Նիպէլունկ » ներք իբրեւ սոսկական մաքառման բանաստեղծութիւնը, կարող ենք Իրիականին քով դնել, թէեւ անիկայ չունենայ այս վերջնոյն վեհութիւնը : Եթէ զիցերգու բանաստեղծութեան այս սեռը ներկայ ժամանակին մէջ կարող չէ հին Յունականին եւ Հռոմէական-

նին հաւասարիլ, բայց այն ոգին ու զգացումները որոնք զիցերգու բանաստեղծութեան մտաւորն են, չենք կրնար ըսել թէ բոլորովին դադրած են ժամանակակից մարդկութեան սրտին մէջ գոյութիւն ունենալէ : Հոմերոսի եւ Վիրգիլիոսի ճաշակն ու հաճոյքը բոլորովին մեռած չեն դեռ, միայն թէ ժամանակակից կեանքը ուրիշ ձեւեր զգեցած է, ու կը զբաղի աւելի իրականութիւններով քան թէ երեւակայութեամբ : Ժամանակակից ժառանգները ոչ թէ ի խոյզ Ոսկեդղմին կ'երթան այլ Աւստրալիոյ եւ Քլոնտայքի ոսկեհանքերը կը գիւմեն : Մեր Հերակլէսը Քոլոմպոսն է երբ որոշ ծրագրով մը անձանթ ծովերու մէջ կ'իյնայ հասնելու համար Արեւմուտքին : Գլխաւոր կենդանակերպները ուրիշ բաներ չեն բայց եթէ առասպելական նախատիպարները յիշանքներու եւ փորձութեանց որոնք ժամանակակից, գիտական խաղաղիւններու գէմը կ'ելնեն : Իրիտական ընդարձակ կայսրութեան մէջ, զաղթականներու ու միսիոնարներու ձեւին տակ կան շատեր, որոնք ամեն տեղ դէմ հանդիման կը գտնուին ժամանակի, սովի, դժբախտութեանց հետ, այս ամենուն փոխարէն քաղաքակրթութեան լոյսը տարածելու համար :

Եթէ այսօրուան մեր կեանքը աչքի առջ ունենանք, պիտի տեսնենք թէ հոմերական կեանքի մը համար ոչ պարագաները եւ ոչ ալ նկարագիրները կը պակսին : Վիպերգը աներեւութացած է ներկայ ժամանակին մէջ բայց թերթերը անոնց տեղ կը բռնեն, իրենց օրը օրին կեանքէն առնուած պատմութեանքներով, որոնք մարդկութեան բուն ջանքերը կը ցոլացնեն : Ճանապարհորդական ինչ պատմութիւններ կրնան աւելի տարօրինակ ըլլալ քան այն քանի մը ժամանակակից ճանապարհորդական տեղեկագիրները որոնք խաւարակուռ Ափրիկէէն հասած են մեզ Լիվինկըսթըններու, Տիւչէլիւներու եւ Սթանլիններու ձեռքով :

Եղած են շատ մը երկրախոյզներ որոնք մահը աչքերնին առած, մտած են վայրի ցեղերու մէջ : Նանսընի պատմութիւնն ալ չի տարբերիր ասոնցմէ, երբ անիկայ դէպի Ծայրագոյն հիւսիս իր ճամբորդութեանը կը ձեռնարկէ : Այս ամենքը էական տարերքները

պէտք է նկատել ժամանակակից Ողիսականի մը : Ինչպէս որ Յասոն Արգոնաւորդներու արշաւանքին նաւը կը պատրաստէր, նմանապէս Նանսըն պատրաստել կուտայ, կատարեալ խնամով, իր արշաւանքին նաւը : Նանսընի աներեւութացումը անծանօթի վտանգներուն մէջ ու յետոյ իր խնդալից վերադարձը, ահա ասոնք ամենքն ալ նիւթերն են ժամանակակից ողիսական կեանքի մը : Հին օրերու ողիսական կեանքի ըմբռնումը, աւելի խճողում մըն էր երեւակայական անյուր պատահաբանքու, որոնք թերեւս երբէք սահմանուած չէին իրականութիւններ դառնալու : Ողիսական կեանքի մեր ըմբռնումը կը տարբերի Հոմերոսի օրերուն եղածէն : Այսօր ամէն ինչ, նոյն իսկ ողիսական կեանք մը միայն իրականութեան հետ կը կապենք : Քիմահաճ յափշտակութիւնները մեզ չեն կրնար զբաղեցնել, մեզի համար իրականութիւնը պէտք է : Երեւակայական պատմութեանքէ նուազ հաճելի, բայց իրականութեան հոտը ունեցող պատմութիւնները մեզի համար աւելի հմայող դարձած են, ու ասիկայ անոր համար չէ որ մենք երեւակայական պատմութեանքը հասկնալու ճաշակը կորսնցուցած ենք :

«Ռուպէնսոն Քրիւզօէ» կամ «Կիւլիվէրի ճամբորդութիւնները» երբէք չի պիտի կորսնցնեն իրենց հմայքը մեզի համար եւ Ռօպէրթ Սթէվէնսոնի «Դանձի կղզին», եւ նոյն տեսակէն ուրիշ գրքեր յոյց կուտան թէ այն ճաշակը ուրկէ կը վարուէին Հոմերոսը եւ «Հաղար ու մէկ գիշերներու» հեղինակը մեզի համար դեռ չէ մեռած : Դեռ մինչեւ այսօր մեծ համակրութիւն կայ հոմերեան արկածներու համար, միայն թէ անոնք լաւ պատմութեանք ըլլան եւ երեւակայութեամբ ստեղծուած բաները չուզուի մեզ իրեւ իրականութիւն ներկայացնել :

Պատմութիւններ՝ որքան ալ յաջող զըր-

ուած ըլլան անոնք, եթէ ճշմարտանման բաներ չեն, ներկայ օրերու քննադատական ոգին եւ իրերու լայն բմբռնումը պէտք եղած համար : Եթէ մեզի պատմութեանքը չի պատահած արկածներ են, կարեւորութիւն չենք տար այլ եւս այդ տեսակ զրոյցներու, թերեւս աւելի երջանիկ պիտի ըլլայինք եթէ անոնց հաւատայինք : Յաճախ առիթը ունեցած ենք նախանձէ յուզուելու երբ տեսած ենք տղաքներ որոնք իրենց մանկական երեւակայութեան ստեղծած աշխարհին մէջ կ'ապրին հերոսներով եւ հմայիչ ոգիներով ակադէմիս, եւ որոնց համար այս ամենքը գերազանցապէս հեշտալի եւ իրական են : Ինչպէս հիասթափումը կամաց կամաց տղուն մէջ բոյն կը դնէ, նմանապէս մորթկային ցեղն ալ իր մանկութեան յաջորդող հիասթափումները ունեցած է : Հիացքը կ'անցնի, երեւակայութեան ու քիմահաճութեան փողփողուն զոյները կը տժգունին հասարակ օրուան լոյսին ու արձակունակ իրականութեան առջեւ :

Բայց, ինչպէս քիչ մը առաջ կ'ըսէինք, արկածներու սէրը, եւ պատմութեանքը մէջ հմայելու կարողութիւնը, դեռ բոլորովին մեռած չէ մեր մէջ, ժողովրդային երեւակայութեան պէս բան մը կայ դեռ ներկայ մարդկութեան մէջ : Սերտար Քիլնիերի եւ իր նմաններու քաջագործութեանքներու եւ արկածալից պատմութիւններու համար մեծ սեղ մը կայ դեռ վերապահուած ժողովրդի երեւակայութեան մէջ, եւ ասոնց մասին ամեն օր կը գրեն թերթերը : Մեր ներկայ կեանքը այնքան արագ է որ նոյն իսկ Քիլնիերի նման անձերու կեանքէն եթէ իրականներ կամ Ողիսականներ ուղուէր հանել, երբէք նոյն ազդեցութիւնը չի պիտի ընէին, անոնք ինչ որ ժամանակին բրած են հասարակութեան մտքին վրայ :

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

ԱՆՈՒՆ ՍԵՂԱՍԵԱՆ

(ՄԻՒՆԻԲ)

Ա.

Պառաւը մինակ էր սենեակին մէջ :
Փողոցին կողմը , նեղ պարտէզի մը վրայ
նայող գետնայարկ պատուհանին քով կծկուեր
էր բազմոցին անկիւնը , ու ձեռքի երկար
ղեղին . սաթէ համրիչը կը դարձնէր հատիկ-
հատիկ . մինչ իր անմիմունջ ու անդադար
երերցող չրթունքները իրենց առտուան ա-
ղօթքը կը կրկնէին մեքենական արագու-
թեամբ :

Յօրանջները սկսան չո՛ւտ-չուտ իրարու
յաջորդել . ուրեմն աղօթքը արդէն մօտ էր
իր վերջին , երբ յանկարծ ահաղին դղրդու-
մով կառք մը սրացաւ փողոցին վերէն , ու
եկաւ շիտակ պարտէզի . վանդակորմին առ-
ջիւ թափով կեցաւ :

— Հարօ , նայէ ո՛վ է , կանչեց պառաւը ,
ու շտապեց իր աղօթքին վերջին տուները
հնար եղածին չափ համառօտ աւարտելու :

Կից սենեակին տիկինն ու սպասուհին
միասին դուրս վաղեցին սրահը . ուրկէ սպա-
սուհին աճապարեց պարտէզ վանդակորմի
դուռը բանալու :

Յարդէ գլխարկի մը լայն եզերքին ու
լայն վահանին տակ կորսուած դէմք մը կառքի
պատուհանէն անհամբեր օդէ համբոյրներ
կ'ուղարկէր գէպի պառաւին լուսամուտը :

Կառապանը կառքին դռնակը բանալուն
պէս՝ վանդակէն ազատուած թռչնակի մը
նման՝ աղջիկ մը թռաւ թեթեւ ու աշխոյժ ,
կարմիր չրջաղեւտին ծալքերը հովին տալով :
Թոթուեց , արագ գէմ եկող տիկնոջ ձեռ-
քը ուժով մը , բարեւեց , խնդաց ու սրացաւ
ներս , մինչ տիկինը կ'ըշտապէր գէպի դուռը՝
կառքէն իջնող սեւաղգեստ ու սպիտակահեր
կիւնը դիմաւորելու :

Կինը իր այրի քոյրն էր . իսկ երիտասար-
դուհին իր արդէն մեռած ուրիշ քրոջ մը աղ-

ջիկը , որ հիմա որբեւայրիին քովը կ'ապրէր :
— Իսկ քուզէ՞նս . քուզէնս տունը չէ՞ .
հարցուց աղջիկը խոժոռած , երբ սեմէն ներս
նետուելով սենեակին մէջ պառաւէն դատ
մարդ չտեսաւ :

— Հո՞ս է , հո՞ս . աչքդ լո՛յս , խնդ : Ա-
նոր գործը չգիտե՞ս . վերը իր սառնարայի
խուցն է , նստեր կը կարդայ , պատասխա-
նեց պառաւը կէս դժգոհ , կէս հպարտ շեշ-
տով մը :

— Կարդա՞ ու կարդա , ես հիմա անոր
կարդալ կը սորվեցնեմ . բացազանչեց աղ-
ջիկը , ու վաղեց սանդուղներէն վեր :

« Սառնարայի խուցը » տան ետեւի կող-
մէն պարտէզի վրայ նայող լուռ , զով ու
լուսաւոր փոքրիկ սենեակ մըն էր , որ հիմա
առժամանակեայ կերպով Հրանտի բնախօսա-
կան աշխատանոցը կը ներկայացնէր :

Պատերէն կախուած էին ուղեղի զանազան
հատումները պատկերացնող բաբախէ՛լ ,
ջղային կեդրոնական թելերու ահագին ձե-
ռանկար մը : Պատին քով քառակուսի ան-
ծածկ հասարակ սեղանին տակը նստած էր
ամենի չիշ մը , ուր լեցուն ալքօլին մէջ
կծկուեր էր երկար-բարակ , մսի զանդուած
մը : Նոյն սեղանին վրայ ապակի նուրբ ա-
մաններու մէջ քանի մը ծովային փօղպոհներ ,
զանգակի ու հովանոցի նմանող , որոնք ի-
րենց մարմնի մէկ որոշ մասը շարունակ կը
բանային ու կը գոցէին ջուրին մէջ : Գովը
եւեղորական դործիքներ : Խիցի տափակ
կտորի մը վրայ գնդասեղով պրկուած էր խը-
խունջի մը բացուած մարմինը : Ու այս բո-
լորի վրան ու շուրջը ծովային խեցիներ ,
սպունգներ , ժժմակներ խառն ցան ու ցիր :
Պարզ էր , որ աղան իւրաքանչիւր պտոյտէ
դարձին բան մը միասին էր բերած : Անդին
ուրիշ սեղան մը , պատուհանին ճիշդ առջեւ ,
որուն մէջտեղը մանրադիտակն էր դրուած .
ու բոլորտիքը անդամաճատական ունեւիներու ,
կեռերու , փորձի սրուակներու , ապակիկնե-
րու , զոյնզգոյն փոքրիկ չիշերու սոսկալի
խառնակութիւն մը : Գանի մը բաց ու գոց
դրքեր , որոնցմէ մէկու բաց երեսին վրայ
ինկած էր երախայի մը դեռ ամբողջովին չի
կազմակերպուած դանկը , կէսը ոսկոր , կէսն
ալ գեղնած մազաղաթի նման :

Մէկ խօսքով՝ « սառնարայի խուց » , ուր

տնեցիք բոլորն ալ խեղճակ մը պատկառանքի ու վախի խառնուրդ զգացումով ներս կը մտնէին : Իսկ պառաւը բացարձակապէս ոչ մէկ պայմանով ներս մտնելու չէր համարձակեւր . եւ առջեւէն անցնելու համար ալ ամէն սեռի ու աստիճանի սուրբերը օգնութեան կը կանչուէին չարին ճամբան դոցելու համար :

Ահա այդ տակնուվրայութեան մէջ տան անփոյթ հազուատներով , օրրան աթոռի մը մէջքին փռուած էր Հրանտ :

Մարմնի լեցուն դներով , վայնչաղէմ երիտասարդ մը . դէմքը մաքուր ածիլուած , մօրուքի փունջ մը միայն ծնոտի ծայրին , արծուի քիթ , ու խոշոր թուխ մտածող աչքեր :

Գիրքը ձեռքին հետ ծունկերուն ձգած զսպած հանգարտութեամբ մը վարի աղմուկին կը հետեւէր ժպիտը չրթունքին , երբ աղջիկը հովի մը պէս սենեակէն ներս խոյացաւ :

Նետուեցաւ չիտակ աղուն վրայ , խեց գիրքը ձեռքէն , նետեց քովը աթոռին , ու զայրացկոտ վրայ տուաւ :

— Ելի՛ր , չ՛ուտ , ոտքի ելի՛ր , անպէտք , անշնորհք , փիլիսոփայ , Ո՛ւր ես երկու շաբաթ է ի վեր . ես քու ետեւէդ պիտի պառտիմ , արդէն հետդ խօսիլը չարժեք : Քալէ՛ շուտ դ՛ուրս այս մօճնտառ ֆառաստի սենեակէդ :

Տղան կը ժպտէր միայն նոյն դո՛ս ու հեզնոտ ժպտումը :

Թողուց որ քաշէ թեւէն , հանէ ոտքի . եւ առանց ոչինչ խօսելու թեւ-թեւի արագ զայթեցան սանդուղներէն վար :

— Տես , մօրաքոյր , ինչպէս խելօքցաւ . կեցի՛ր , ես անոր կը սորվեցնեմ , թէ ինչ ըսել է չարունակ թաղուիլ բզրկտած ուղեղներու ու գրքերու մէջ , եւ օրերով Գատըղիւ մեր տունը ոտք չի դնել : Տէ՛ , ինչ այդպէս պապանծեցար . չի խօսի՞ս . դարձաւ յանկարծ տղուն , լուսնի տակ ամպուած դէմքը անոր յամառ հայեացքին դէմ բռնելով :

— Երբ քու լեզուդ բացուի , ալ ուրիշներուն խօսելու կարգ կը հասնի , եղաւ վերջապէս Հրանտի հանդարտ պատասխանը :

— Աղէ՛կ . եթէ խօսելու ժամանակ չի կայ ,

գոնէ քիչ մը գործ տես . հանէ՛ տեսնեմ սա վուալո : Կամաց , առե՛ղը : Տէ՛ , դեռ չվերջացա՛ր . ինչ կը տընտընաս :

Բայց Հրանտ դիտմամբ սկսաւ ալ աւելի ծանր չարթիլ :

Աղջիկը ցափոտ հտ քաշեց գլուխը անոր ձեռքերուն մէջէն , նետեց վուալը սեղանին վրայ , հանեց լսկոյն զլխարկն ալ , ու ան-թիւ խոսուպիկներով դէմքին շուրջը թափուած մանչու կարճ մաղերը , առիւծի բաշին պէս , թափ տուաւ :

Շարժուն դիմագներով , փոքրիկ , հետաքրքիր ու միշտ ժպտուն դէմք մըն էր : Գրգռիկ բերան մը նուրբ ու սեղմ չրթունքներով : Շագանակի բիրբեր , կապտաւուն ճերմակ ֆօնին մէջէն , որոնք կարծես ամէն վայրկեան իրենց փայլը կը փոփոխէին :

Ամառուան , պարզ ու թեթեւ կարմիր չրջագեղատը ճաշակով գրկած էր իր ճկուն հասակը , ու վրայի բարակ ճերմակ Ժաէթի կոճակները բաց էին բոլոր :

— Է՛ , ինծի նայէ՛ , ես հոս տունը նստելու համար չեկայ . դարձաւ նորէն երիտասարդին : Գնա՛ շուտով հազուատներդ կարգի բեր քիչ մը , անճոռնի զլխարկդ ալ դի՛ր , երթանք դէպի Ֆէնէո . կը հասկընաս :

Ու մինչեւ արմուկը հասնող նուրբ ձեռնոցները վարժ չարժումով մը ձեռքէն հանելով՝ զարկաւ աղուն դէմքին :

— Է՛ , ա՛յ ըսելու համար ինծի վար բերի՛ր . հարցուց Հրանտ ու հառաչանքի նմանող , կեղծ-յուսահատ , ծաղրաշարժ շեշտով մը աւելցուց .

— Նա՛ . արդէն քու ձեռքդ ինողը աղա-տում չունի :

Աղջիկը ակընթարթ մը նայեցաւ անոր ետեւէն ժպիտը այտին . վարի չրթունքով թեթեւ չարժում մը ըրաւ . ու յանկարծ դարձաւ , նետուեցաւ անկիւնը նստած պառաւին գիրկը :

— Է՛ , մայրիկ , ի՞նչպէս ես , աղէ՛կ ես : Տղաքդ խելօք կը կենան , թէ՛ քեզի նորէն շատ կը բարկացընեն , այդ քու մօրուքաւոր աղաքդ . հըմ , քու տեղդ ես ըլլալու էի : Երեւակոյէ , մայրիկ , այս առտու դեռ պիտ-քիւի խանութը գոց էր , առջեւէն անցած ատեննիս , իսկ ես , գլխիս , որ քեզի համար ուրիշ տեղէ չեմ առներ . հոն միշտ թարմ է

ու փափուկ . ճիշդ քու դոյութիւն չունեցող
ակռաներուդ համար :

Ու կնոջ վրայ հակած՝ անոր թառամ այ-
տերը կը շոյեր : Մինչ պառաւր կը խնդար
նեղողամիտ ու բարի խնդուկով մը , որ սի-
րած ճակնէն ամէն կատակները ներելու
պատրաստակամութիւնը կը յայտնէր :

— Դուն բռէ՛ , մայրիկ , ես աղէկ աղջիկ
եմ անանկ չէ՞ . չա՛տ աղէկ :

— Աղէկ ալ , աղուճր ալ , դեռ աւելին
ալ . պատասխանեց պառաւր ծանր-ծանր :
Ու գիտե՛ս , Մինէ , դուն մէկ հատիկ . ան-
նման կը լինէիր , եթէ . . .

— Է՛րնչ , եթէ՞ . . .

— Եթէ այդ քու թատրոնը խաղալէդ ձեռք
վերցնէիր :

— Ա՜ն , այդ կէտին չի դաշինք . բացա-
զանչեց Մինէ , ցատկեց ոտքի ու վազեց
դէպի սեղանատունը :

— Բայց , մօրաքոյր , չի կարծես թէ փորս
կուշտ է :

Երկու քոյրերը հոն էին արդէն :

Աղջիկը հազիւ սեղանին առջեւն էր ան-
ցեր , երբ սեմին վրայ երեւցաւ Հրանտ , ու
թեւովը ձեռքի սեւ փափուկ գլխարկը մաք-
րելով աղջկան խոնարհութիւն մը բրաւ .

— Եթէ աղնուաշուք օրիորդը կը բարե-
հաճի . . .

Մինէ արտօրաւով մէկ-երկու պատառ ալ
կերաւ , ու թռաւ ոտքի :

— Հապա անօթի էիր . նկատեց տանտի-
կինը :

— Ա՛խ , անոր անօթութիւնը . վրայ տը-
ւաւ քոյրը :

— Սա քու վարժապետի խոշոր հովանոցդ
նորէն հետդ ա՛ն . զլխարկ չի պիտի դնեմ ,
հրամայեց աղջիկը :

— Քալէ դուն . ես գիտեմ արդէն , որ ա-
ռանց իմ հովանիիս վերջիվերջոյ քայլ մը ընել
պիտի չկրնաս . առարկեց տղան երկմիտ :

— Շատ չուշանաք , Մինէ . պռապ որբու-
այրին :

— Պարտէզը Հրանտ բացաւ հովանոցը :

Աղջիկը մտաւ անոր թեւը . ու ելան փո-
ղոց :

Շուտով բնակութիւններէն դուրս ելաւ
ճանապարհը , ու ծովի սիւղուտ եզերքէն մտաւ
Ֆէնէս-Պահէի կարճ թերակղզին , որուն

ծայրը ճերմակ փարօսը կը ցըցէր վեր . կար-
ծես ճեղքելուրի դունչը՝ եղջիւրը քիթին :

— Սա սէր ես այս քանի տունն է . ամօթ
չլինի հարցընելը . բացաւ Մինէ խօսակցու-
թեան ծայրը :

— Գիտես , սիրելիս , իմ զբաղումներս :

— Ա՛խ , քու զբաղումներդ . ի հարկէ :

Եւ ցընցեց ուսերը :

— Աղէկ . դուն լո՛քդ ուր ես . աւելցոց
Հրանտ :

— Գիտես , սիրելիս , իմ զբաղումներս , պա-
տասխանեց աղջիկը՝ հնար եղածին չափ տղու
ձայնին ու շեշտին նմանցընելով :

— Հրանտ խնդալու ստիպուեցաւ :

— Ինչո՞ւ կը խնդաս : Եթէ խնդիրը զբա-
ղումին դայ ես քեզմէ տասը անգամ աւելի
ընելիք ունիմ վզիս . բայց , տէ՛ս , նորէն ելեր
ու եկեր եմ : Ի՞նչ զբաղում . քու անչնորհ-
քութիւնդ : Արդէն վերջին ժամանակները
քանի կ'երթաս այնքան ետական կը դառնաս
զլխուս : Է՛ , էրիկ-մարդ ես վերջապէս . ձեր
ամենէն լաւը իր տեղը մնայ :

Ու ձեռքի արհամարհոտ շարժում մը ընե-
լով լոնց :

Թերակղզին կեդրոնը ցած ու փոքր զեղ-
ջուկ սրճարանը նստած էր ծերունի ծառերու
հովանիին տակ . Պարտէզին ծերունի աււոյրը
երկար աւելը ձեռքին ահաղին փոշի էր
բարձրացուցեր դռան առջեւը , ուր ցածրիկ
աթոռակներու ամբողջ բլրակ մը կար իրարու
վրայ դիզուած :

Զոյգը անխօս անցաւ սրճարանի ետեւէն՝
ու անգին փարօսի ճերմակ պտտին տակ կանգ
առաւ : Գիտինք ամբայած էր հոտ , ու մին-
չեւ ծովի հարթակ մը կը կազմէր , որուն
ոտքը ցիր-ցան ժայռերու խառնակ չրջանակի
մը մէջ ծովուն մէկ կտորը բնասարկուած
սրտնեղութենէն անդադար կ'երերար զայրոյ-
թի ճողբիւնը չրթունքին . Մինչ հեռուն ըն-
դարձակ ու ազատ կը փռուէր ջուրի անդորը
մակերեսը արեւի ոսկեհոս հայեացքին տակ :

Տղուն գոց հովանոցին կրթնած , աղջիկը
երկու ձեռքերը մէջքին՝ կեցած էին իրարու
քով . երկուքի աչքերն ալ այդ անծալ տարա-
ծութեան վրայ սեւեռուն :

Զո՛ւվ , անսէշ ու ծովուն շունչը գողցած
հովիկ մը կու դար կամաց բացերէն , Մինէի

ցրիւ դանդուրներուն ու աղուն փողպատին թոյլ կապին հետ խաղալու :

— Գիտե՞ս , Հրամաւ դարձաւ յանկարծ աղ-
ջիկը : Գալ ամիս նորէն հայերէն ներկայա-
ցում մը պիտի ունենանք . արածնութիւնը
գրեթէ առնուած է արդէն :

— Իրաւ հարցուց երիտասարդը անտար-
բեր :

— Սաղն ալ մեր ժամանակակից կեանքէն .
նոր գրագէտի մը հոգեբանական մօտեն մէկ
փորձը : Կը յուսամ սիրուն բան մը պիտի
ըլլայ , հիանալի է մանաւանդ իմ դերու : Դէ ,
կրնաս հասկընար , թէ մեր սովորական , միշտ
կրկնուող , թափթըփուկ խաղերուն մէջ , որոնց
մեծագոյն մասը դառամ մեկտրամներ են
միայն , հիմա ինծի որչափ կ'ողեւորէ այս նոր ,
մեր կեանքէն , թա՛րմ հայեացքներով հոգե-
բանական փիէսը , ուրկէ գերասանը իրական
ու ապրուած բան մը կրնայ հանել : Ի՞նչ .
եթէ այդ չըլլար , դուն կը կարծե՞ս որ այս
երկու շարժութեան աներեւոյթանալը այսպէս
աժան կը ներէի քեզի :

Քայլ մըն ալ մօտեցաւ աղուն , ձեռքը թե-
թեւ մը դրաւ անոր ուսին , յանկարծ ետ քա-
չեց ու մտածկոտ աարածեց զէպի ծովը :

— Արդէն կ'երեւակայեմ ինծի բեմին վրայ .
ա՛խ , ինչպէս կարօտեցի եմ . թատրոնին յա-
տուէկ այն տեսակ մը մթնոլորտը , ինքս սուգ-
ուած խաղիս նրբութիւններուն մէջ . ու այն
անհանգիստ , բայց հաճոյական անուշ յուզումը
կրծքիս տակ . . .

Եւ կարծես այդ բոլորը աւելի՛ խոր դա-
լու համար աչքերը գոցեց . ձեռքը դեռ միշտ
պարզած դէպի ծովը , թեթեւ մը տոգունած ,
եւ պինդ խածուած ծնօտին ու կիսաբաց
չրթուէքներուն վրայ հեշտանքի արտայայ-
տութեամբ :

Տղան անթարթ կը նայէր անոր . տարօրի-
նակ անհանգարտ ու խոժոռ նայուածքով մը :
Վերջը խիստ գիտական ու պաղ շեշտով մը
պատասխանեց ,

— Թէ մեզի յարմարող ամէն աշխատանք
ինքնին հաճոյք մըն է՝ այդ շատ աղէկ
կը հասկընտմ . կը հասկընտմ նաեւ որ մարդ
ամբողջովին իր գործին վրայ կեդրոնանայ .
բայց այդ աստիճան վերանալ , եւ ինչպէս հաս-
ցնել ինքզինքը , այդ արդէն պարզապէս

ջղային հիւանդութիւն է . քսան անգամ ըսե՛ր
եմ քեզի :

Մինէ աչքերը բացաւ . ու ժպտեցաւ հա-
զիւ նշմարելի ժպիտով մը :

— Այդպէ՛ս կ'ըսես , որովհետեւ ինքդ ար-
թիւտ չես . որովհետեւ չես ապրած այն ներ-
քին դողն ու զգացումները , որոնք ոգեւոր-
ուած արուեստագէտի մը հոգին կը փոթոր-
կեն :

— Ա՛խ , փոթորիկ , « թիկստ » , ոգեւորու-
թիւն . բացականչեց աղան տաքցած ու կրքոտ
Խոշոր-խոշոր դատարկ բաւեր , որոնց տակը
փոքրիկ զգացումներ են ծածկուած միայն :
Երբէք վերլուծե՛ր ես անգամ մը քու սեփա-
կան յուզումներդ , որ անուշ դող , արթիւտ
անհանգստութիւն , բեմական տենդ եւ այլն
կ'անուանես շարունակ : Մենք գիտական-
ներս ուրիշ անուններ ունինք այդ բոլորի հա-
մար , որոնք թէեւ այնքան բանաստեղծական
չեն հսկեր գուցէ , բայց աւելի որոշ լինելու
տուաւելութիւնը ունին : Սխալ մը ընելու
վախ , ուրիշներուն հաճոյանալու ձգտում ,
գովասանք լսելու հաճոյք , ու սովորական
փառասիրութիւն . ուրիշ ոչինչ :

Ու ոտքովը ուժով զարկաւ քարի փոքրիկ
կտորի մը , որ հարթակին վրայ գլորուելով
ցատկեց ծովէն դուրս ցըցուած ժայռի մը
կուրծքը , հոնկէ ալ ճողքեց ջուրին մէջ :

Մինէ նոյն հանդարտ զիմագծերով կը նա-
յէր աղուն , վերջը վայրկեան մը հայեացքը
ձգեց վա՛ր , իր փոքրիկ կօշիկին ծայրը . եւ
ուղղուելով պատասխանեց .

— Շիտակ է . քու ըսածներդ կա՛ն ու մեծ
դեր կը խաղան քու լիսներու կեանքին մէջ :
Բայց այդ բոլորը , կարծես առաջին աստի-
ճանն է միայն . ստորին աստիճանը , որուն
վրայ , ի հարկէ , կանգ կ'առնեն շատ-շա-
տերեւ : Սակայն կայ եւ եկրորդ աստիճանի
զգացում մը . ան , որ իսկական աստեղծագոր-
ծող ուժը կը զանազանէ գեղարուեստի սո-
վորական պաշտօնեաներէն :

Աչքերը վառեցան , ականթարթ մը շունչ
առաւ , եւ յանկարծ վրայ տուաւ աւելի ու
աւելի կրքոտող շեշտով մը , եւ գերասանա-
կան առատ շարժումներով :

— Ի՞նչ . երբ ես բեմին վրայ դերիս մէջը

խրած՝ իմ յուզումներուս եւ ուժերուս հետ կը նկրտիմ, կը կարծես մէջս վախ կրնայ առաջ գար: Վախ, ուրկէ՞. այդ գիմացի բաղմութենէն. անկէ՞ պիտի գովասանք մուրամ ինծի: Ա՛, եթէ գիտնաս երբեմն ինչպէս սպաննիչ ու զայրացընող են այդ ծափահարութիւնները, որոնք ինծի իմ զգացումներուս բարձրութենէն վա՛ր, վա՛ր կը քաշեն անխնայ: Ո՞վ են ասոնք, այդ ծափողները, այդ իմ խաղալիքներս, այդ իմ խաղիս ստրուկները: Ա՛հ:

Ու արհամարանքի ստորակէտ մը պահ մը խօսուածքը կտրեց: Եւ բոլովին փոխուած, աւելի հանգիստ եղանակով մըն էր, որ շարունակեց. մինչ աչքերուն բոցը ալ աւելի վառիլ սկսաւ:

— Իմ ճշմարիտ ոգեւորուած վայրկեաններնուս մէկ զգացում մը միայն ծծուած է տաքող կազմիս մէջ. կէս դիտակից, կէս բնազդօրէն: Թէ այդ բոլոր բաղմութիւնը հիմա հմայողը ես եմ, թէ հարիւրաւոր աչքեր կախուած են իմ աչքերէս, թէ կուրծքէս ցայտող ամէն մէկ ճիշդ անոնց կուրծքը կը խրի, թէ դէմքիս թեթեւ մէկ շարժումը յոյս, վախ, տենչանք ու սարսափ կը թափէ անոնց վրայ: Է՛, դուն ի՞նչ գիտես, այն յուզումը, որ մարդու ջիղերէն կը վազէ, երբ քեզի նման հարիւրաւորներ քեզի հետ կը շնչեն, քեզի հետ կը տանջուին ու քեզի հետ կը խնդան. եւ անոնց հոգին դո՛ւն ես այդ վայրկեանին: Ազդե՛լ, ներշնչե՛լ. տուր ինչ անուն որ կ'ուզես: Ուրիշները իր հոգեկան ուժովը, իր ստեղծագործութեամբը հիացնելու մէջն է գեղարուեստագէտի էական հաճոյքը. եւ այդ իր ուժի գիտակցութենէն քղկտող հպարտութիւնն ալ իր գովասանքն

է ու փառքը, որ բնաւ պէտք չունի դուրսէն մուրալու:

Լռեց վերջապէս, ու մտածկոտ կեցաւ քիչ մը. ետքը կամաց մը դարձաւ տղուն, եւ նոր նշմարեց, որ Հրանտ դէմքի ցրուած արտայայտութեամբ մը կոհակներէն դուրս ցըցուած ժայռի մը կը նայէր պիչ նայուածքով: Անտովոր կոարուած ու վշտոտ բան մը կար իր անշարժ դիրքին մէջ, որ ազնկան սիրտը խածաւ:

Մօտեցաւ կամաց մը անոր. ու տղան սթափեցաւ իր կաշկանդումէն:

— Է՛, այդ ի՞նչ դէմք ես չիներ: Կ'երեւայ թէ այս ըսածներս ալ քեզի համար հիւանդութեան նոր նշաններ են միայն: Հա՛, պարոն տօքթօր բնախօսութեան ու փիլիսոփայութեան:

Ու չրթունքներու կտտակի ծամածռութեամբ մը դէպի անոր դէմքը ծռեցաւ:

— Ո՛չ. Սիրտերու տիրել. երկու բառ, որ բնադէտները իսկոյն զինաթափ կ'ընէ. բնութեան մեծ երեւոյթն է այդ եւ դուն ալ այդ առողջ բնութեան առողջ զաւակն ես, դնա՛ եւ սրտերու տիրէ:


Այս ըսուած էր տեսակ մը հանդիսաւոր ձայնով ու չեչտո՛վ մը, որ կարծես այդ խօսքերը արտասանելը ահագին ու վճռական զոհաբերութիւն մը լինէր արտասանողին համար:

Մինէ չառ լաւ հասկցաւ այդ բոլորի ետեւի իմաստը:

Աչքերը տղուն աչքերուն՝ երկու ձեռքերը կոնքերուն դրած՝ յամառ դիրքով մը կեցաւ անոր դէմը. ու չարածճի եւ վստահ ժպիտով մը աւելցուց:

— Բայց ամենէն առաջ, ըսւ սրտիդ:

(Շարունակելի)



Ս Ի Բ Ո Յ Ե Ր Կ Ս Ե Ռ Ը Մ Ք Ո Ն Ո Ւ Մ Ը

(Սիրոյ բնասութիւնը , Մոնրէկացցա)

Իտալացի նշանաւոր բժիշկ Մոնրէկացցայի « Սիրոյ բնասութիւնը » գրքէն , որ Եւրոպական բոլոր լեզուներուն քարգմանուած է . կը քաղենք հետեւեալը , որուն մէջ կ'երեւայ կնոջ եւ մարդուն հոգեբանութիւնը , սիրոյ մէջ .

Ասիկայ փորձ մըն է , սեռերու բաղդատական հոգեբանութեան . Սիրող մարդու մը կամ կնոջ մը ամէն մէկ մտածումը , բառը , շարժումը իր միայն կը կրէ սեռին դրօշմը . Երբ նկարագիրները իրենց ունին համապատասխանող ըլլան . Մոնրէկացցա կ'աշխատի ցուցնել , թէ երբ նկարագիրները իրենց սեռին դրօշմը չի կրեն ատոր հետեւանքը միայն անհաճոյութիւնը կրնայ ըլլայ : Այն ատեն մեր ուռջեւ մարդ մը կամ կին մը ունենալու անդ կը տեսնենք ծաղրանկար մը կամ ճիւղ մը , կամ նոյն իսկ ոճրագործ մը :

ԾՆԹ. ԽՄԲԳ.

Ա Դ Ա Մ Ի Ն Ս Ե Ր Ը

Պէտք է վերջապէս իրարմէ բաժնուինք .
բանականութիւնը կ'ըսէ մեզ թէ
պէտք է մոռնանք այլ եւս մեր սէրը :

Ի՞նչ գեղեցիկ ես :

Միշտ գեղեցիկ եղիր , եւ կրնաս ապահով
ըլլալ որ միշտ պիտի սիրեմ քեզ :

Ա՛խ , աշխատէ՛ դիտ երջանիկ ընել , եթէ
նոյն իսկ զիս չես սիրեր :

Վրաս խնդացնել չի տաս :

Ամէն ինչդ իմս պէտք է ըլլան :

Ամեն սէր կը վերջանայ անտարբերու-
թեամբ կամ բարեկամութեամբ :

Կ'ուզեմ որ այսպէս ըլլայ , եթէ չի կատա-
րես փափաքս ուրեմն չես սիրեր զիս :

Սէրը մեծագոյն հեշտանքն է :

Անպատճառ ուրիշին ալ սէր տուած է :

Արդեօք արժանի՞ է ինծի :

Արդեօք կրնամ զիս երջանիկ ընել :

Արդեօք պիտի կրնամ զիս գոհացնել :

Ա՛հ , չափազանց կը մտածեմ իրեն մա-
սին :

Միայն քառորդ ժամ մը ուշացեր եմ :

Պէտք է երթամ . երկար ատեն է որ
հոս եմ :

Ե Ի Ա Յ Ի Ն Ս Ե Ր Ը

Սարսափելի մարդ ես : Կ'ատեմ քեզի :
Քու ներկայութեանդ պզգալ կուգայ ,
բայց նորէն կը սիրեմ քեզ :

Որքան մեծ ես :

Հաւատարիմ եղիր ինծի , եւ կրնաս ապա-
հով ըլլալ որ միշտ պիտի սիրեմ քեզ :

Ինչ կ'ուզես ըրէ ինծի , միայն թէ պէտք
է որ սիրես զիս :

Չեղլաս զիս մտանես :

Սիրող իմս պիտի ըլլայ :

Սէրը կրնայ վերջանալ միայն ատելու-
թեան կամ արհամարհանքի փոխուելով :

Եթէ կը սիրեմ քեզ , բաւական չէ՞ այդ .
ինչո՞ւ տուելին կը պահանջես :

Սէրը կեանքն իսկ է :

Ա՛խ , ժամանակով ուրիշ մէկը սիրած է :

Արդեօք արժանի՞ եմ իրեն :

Արդեօք կրնամ զինքը երջանիկ ընել :

Արդեօք պիտի կրնամ զինքը գոհացնել :

Ա՛հ , պէտք եղածին չափ չեմ մտածեր
իրեն մասին :

Ինչո՞ւ համար միշտ կ'ուշանաս :

Կ'ուզես արդէն մեկնել , մինչդեռ դրեթէ
նոր եկար :

Ողջագութում մըն ալ :

Համբոյր մըն ալ :

Ներէ ինծի , իրաւ անպիտան մարդուն
մէկն եմ , բայց զիտցած եղիր որ սիրաս
քուկինդ է :

Պալատ մը կ'ուզէի , սիրելիս , քեզ անոր
մէջ դնելու համար :

Պղատոնական սէրը խենդ բան է :

Պէտք է իմա ըլլայ , որովհետեւ կարօտը
կը քաշեմ իրեն :

Աւելի աղէկ որ մեռնի քան թէ ուրիշին
կինը ըլլայ :

Ժամանակ անցնելով պիտի սիրէ զիս
վերջապէս :

Իրեն համար այնքան ոսկեզէն եւ ա-
ղամանդներ պիտի առնեմ , որ պիտի
ստիպուի զիս սիրել :

Աստուած իմ : Ուրկէ՞ կուգաս : Դուն
պատիւս վտանգի կ'ենթարկես :

Ա՛խ , որչափ կը սիրէ զիս :

Պէտք է որ իրեն երթամ :

Ի՛մա պիտի ըլլայ :

Սիրունիս էր , սիրունիս է :

Ա՛յսօր :

Վաղը :

Ամիսէ մը :

Ի՛սկոյն :

Այո՛ , այո՛ , այո՛ :

Կը հետաքրքրուիմ իրմով , անոր համար
կը սիրեմ զինքը :

Խելացի աղջիկ մըն է , որովհետեւ ան-
մեղ է :

Կինը մինչեւ վերջը հաւատարիմ չի կըր-
նար մնալ :

Համբոյր մըն ալ :

Անգամ մըն ալ ըսէ , թէ կը սիրե՞ս զիս :

Կը ներեմ քեզ , որովհետեւ կը սիրեմ քեզ
տակաւին :

Ուզածս սիրտ մը եւ հեղակ մըն են
միայն :

Շատ կարելի է որ պղատոնական սէր
ըլլայ :

Պէտք է իմա ըլլայ որովհետեւ կը սիրեմ
զինքը :

Թող ուրիշինը ըլլայ , բաւական է որ
ապրի :

Ձինքը այնչափ ուժգին կերպով պիտի
սիրեմ որ ինքն ալ պիտի սկսի զիս սիրել :

Իրեն այնչափ ս՛ր պիտի ցուցնեմ , որ
պիտի սկսի զիս սիրել :

Ի՞նչ կրնայ ըսել աշխարհք , եթէ դուն
կը սիրես զիս :

Ա՛խ , որչափ կը սիրեմ զինքը :

Ինչո՞ւ չեկաւ դեռ :

Նշանածս պիտի ըլլայ :

Բարեկամս էր , բարեկամս է :

Վաղը :

Վաղը չէ միւս օր :

Տարիէ մը :


Երբէ՞ք :

Ոչ , ոչ , ոչ :

Կը հետաքրքրուիմ իրմով , բայց չեմ սի-
րեր զինքը :

Խելացի աղայ մըն է , որովհետեւ զիս
չատ կը սիրէ :

Մարդը ճշմարտապէս չի կրնար սիրել :



ԲՕԼ ՎԵՌԼԵՆ

ՍԻՊԻԼ

«Ծերացած չար հրեշտակի գլուխ մը, անյարգար եւ ցանցաւ մօրուքով, կոշտ քիթով, հասկի մը քիստերուն պէս ցից ու թաւ յօնքերով, որոնք կանսնչ խորուկ նայուածք մը կը ծածկեն, լերկ, երկամաձեւ ահագին գանկ մը առեղծուածային ուռեցքներով խոշտանցուած . . .»

Ժիւլ Հէօսէի այս տողերը միաքանիստ կուգային ամէն անգամ որ Վէռլէնի անունը կը լսէի, եւ երբեք չէի բաղձար զինքը ճանչնալ :

Լամառթիւնէն ի վեր այնքան վարժուած ենք բանաստեղծները երեւակայելու մետաքսաւէտ խարտեաչ գանդուրներով, կապոյտ, երագուն աչքերով, եւ լուսնին պէս հմայիչ մոյնքով, որ չէի ըմբռնիր չար հրեշտակի կերպարանքով վուկ բանաստեղծը :

Բայց օր մը ծանօթներէս մէկը, անոնցմէ որոնք իրենց չունեցածը արհամարելով վրէժ կը լուծեն ունեցողներէն, Վէռլէնին համար ըսաւ, թէ խենդ մըն էր պարզապէս :

Այդ մէկ բառը, այդ անձին կողմէն արտասանուած՝ պատուոյ տիպոսի մը պէս՝ բաւական եղաւ բարձրացնելու Վէռլէնը մըտքիս մէջ :

Ընդհանրապէս լրջամիտ մարդիկը չեն որ ամէնէն գեղեցիկ գործերը կատարած են աշխարհիս վրայ : Լուրջ մարդիկը մեծ անձնասէրներն են, եւ լուրջ բանաստեղծները ամէնէն ձանձրալի գրողները : Խենդ բանաստեղծ մը կարողա՛յ հրապուրիչ բան է, մանաւանդ մեղի համար, որ այնքան շրջապատուած ենք տափակ եւ տխմար լրջութիւններով, եւ մեր տնական օրհաշուին չափ կարգի կանոնի տակ կը դնենք մեր բոլոր մտածումները, զանոնք արտադրելէ առաջ :

Այս անյուրիջ խորհրդածութիւնս բարեբաղդութիւն մը եղաւ ինծի, որովհետեւ առիթ տուաւ ուսումնասիրելու Ֆրանսայի արդի ամէնէն մեծ բանաստեղծը, որ մեռաւ 1896 Յունվարին, եւ որուն դագաղին շուրջը միացան ոչ միայն երիտասարդ գրողները, որոնց իշխանն ու հոգին էր միանգամայն, այլ եւ գրական բոլոր սեռերու, բոլոր դպրոցներու ներկայացուցիչները, իրենց հիացումի հաւատքը բերելով անոր անմահ հանճարին :

Վէռլէնը ճանչնալը զիւրին է : Իր բոլոր կեանքը 12 հատոր բանաստեղծութեանց մէջ կը պարունակուի : Զատ կենսադրութիւն մը չունի անս իր չարչրկուած, դժբախտ կեանքին պատմութիւնը այդ սաղեւրուն մէջն է, որոնց ամէն մէկ էջը, ամէն մէկ տողը՝ իր կեանքէն ժամ մը, վայրկեան մըն է շատ անգամ. բայց այդ թերթուածները վերլուծութեան պէտք ունին, եւ ամբողջ հոգեբանական աշխատասիրութիւն մըն է անոնց ոգիին թափանցելը, որք տակաւին գտած չես բանալին : Այսպէս չէն բոլոր հանելուկներն ալ : Կը կարդաս առանց բան մը հասկնալու . հազար անգամ կը խորհիս վրանին, եւ անգամ մը լուծումը գտնելէ ետքը՝ կը զարմանաս խելքիդ, այնչափ պարզ, այնչափ որոշ բան մը չկրնալ գուշակելուդ համար :

Ահա բոլոր Վէռլէնը :

Իր տաղերուն զմայելի ներդաշնակութիւնէն յախշտակուած՝ իմաստին չես մտածեր առաջ, եւ մանաւանդ չես կարծիր որ այնքան

զմայլելի, նորանշան բառերով այնքան պարզ բաներ ըսէ մարդ : Եւ սակայն երբ անգամ մը վարժուիս իր ոճին, կը տեսնես որ ամէնէն պարզ գրողն է, եւ ամէնէն անկեղծը իր զգացումներուն արտայայտութեանց մէջ : Իր քերթուածի հատորներուն թուականին հետեւելով՝ կարելի է ճանչնալ իր ամբողջ էութիւնը արեւոյտով զանազան արկածները, իր հոգին յեղափոխող վրդովումները, այդ կոյս, այդ մանուկ հոգին, որ տերեւի մը պէս սարսափելով կ'երգէ սիրոյ, ցաւի, մեղքի, սարժանքի եւ կրօնքի խորունկ զգայութիւնները, որոնք, իրարու յաջորդելով, հակասական երեւոյթ մը յառաջ կը բերեն, որքան իր կեանքին, այնքան իր գրականութեան մէջ :

Իր բանաստեղծութեանց առաջին հատորին մէջ, զոր հրատարակած է 1866ին Poèmes saturniens (Երեսակցայից քերթածներ) անունով, կը գտնենք Լը Քօնթ Եւ Լիւի, Քօթէի, Սիւլի Բրիւտոմի, Տիէրսի, Քաթիւ Մէնտէսի ընկերը, պոետական մը վերջապէս, բայց ինչպէս կ'ըսէ Շառլ Մօռուս, ըմբոստ պատահական մը կամ թերեւս ստորջացած ուսման դիկ մը, որ Քսափիէ Եւ Ռիքուրի դասերուն ազդեցութեան ներքեւ՝ կը համակերպի ժամանակին ոգւոյն : Արդէն իր զգայնիկ, ջղուտ հոգին կը արամադէ զինքը միջավայրին եւ իրերուն տպաւորութիւնը կրելու : Իր տաղանդը, լծի մը ջուրին պէս վճիտ՝ կ'անդրադարձնէ իր շուրջը եղած առարկաները : Ինք իր սարսուռը կու տայ անոնց, անոնցմէ կ'տանէ գոյներնին, ձեւերնին, ցոլքերնին, եւ անոնց հետ կը խառնուի, ու կը միանայ անոնց անդիտակից, ակամայ՝ իր էութեան բնական հակումովը : Այս պատճառաւ է որ Վէպլէն, իր առաջին հատորին մէջ, տարբեր է ինքզինքէն, այսինքն ապագայ ճշմարիտ Վէպլէնէն, եւ հաւատարիմ հետեւող մը Փրանսական գրականութեան արուեստին ու լիզուի օրէնքներուն : Բայց հակառակ այս կարգի կանոնի եւ նորաձեւութեան պահանջումներուն՝ իր իսկատիպ հանճարը երեւան կու գայ, եւ ինք կը մնայ իր ժամանակակիցներուն մէջ՝ ամէնէն ներշնչուած եւ ամէնէն ճշմարիտ բանաստեղծը :

«Շատ աւելի եւ, շատ պակաս է մեզմէ,» կ'ըսէ Ժիւլ Լըմէթըր անոր համար, եւ այս

առաւելութիւնը կամ պակասութիւնը իր ամէնէն մեծ փառքը պիտի կազմէ, եզական խորունկ, անձանօթ չեղտ մը տալով իր հանճարին արտադրութեանց, որոնցմէ մէկն է հետեւեալը .

Հեծերն անհուն
Ջութակներուն
Աշնային,
Կը խոցեն զես
Տալով սրտիս
Թալուկնին :

Եւ շնչահատ,
Համակ գունատ,
Երբ գայ ժամ,
Կը յիշեմ ես
Իմ հին օրերս
Ու կուլամ :

Եւ կ'երթամ յար
Ուր հովեր չար
Ձիս տանին,
Հոս, հոն նրման
Գոս, անկենդան
Տերեւին :

Յետոյ այս սկսնակի ու աշխատողի արտադրութիւններուն կը յաջորդէ իր սիրոյ կեանքը, որուն արդիւնքն է La bonne chanson, (Բարի երգը), անհունապէս անուշ, հեղինակին վաղանցուկ երանութեան միակ տարին, ճշմարիտ եղեմը, որուն պիտի յաջորդէր մեղքը :

Ճիշդ Փրանկօ-դերման պատերազմին տեսնին էր իր ամուսնութեան թուականը օրիորդ Մաթիլտ Մօթէի հետ : Անծիր, անխառն երջանկութեան մը ճառագայթումն է որ կը հոսի իր արհաւիրքով լեցուն էութեան մէջ : Գոհունակութեան յուզումներով բաբախուն սրտի մը սխրալի չեղտերն են որ կը հնչեն, իր բոլոր արիւնին եռուղեւումն է լայն սքանչանքի մը խենդեցնող զբոգանքներուն ներքեւ, վերջապէս սէրը, իր երազած բանաստեղծի տարապայման սէրը, որ կը տիրապետէ ամբողջ այդ հատորին մէջ, կը փակէ իր գրողի եւ մարդու միշտ զուգընթաց կեանքին առաջին շրջանը :

Ահա նմոյշ մը այդ անդորրաւէտ հասորէն .

Լուսնին տակ ճերմակ՝
կը շողայ պուրակ,
Ամէն մէկ ոստէ
Զայն մը կը հընչէ
Խիտ սաղարդին տակ . . .
— Ո՛վ սիրուն հոգեակ :

Լըճակին վըրայ,
Խոր հայլի հըսկայ,
Կ'արձակէ ըստուեր
Ուռին տըրտըրէր ,
Հոգն հոն կը կոծի . . .
— Ժամն է երազի :

Գողտը , համանուէր
Անդորրութիւններ
Կարծես վար կ'իջնեն
Երկակամարէն,
Զոր կ'երփնէ լուսին . . .
— Ժամն է հեշտադին :

Բայց իր դրախտն ալ օձ մը ունի , որ Արթիւր Ռէմպոյի կերպարանքին տակ կը ներկայանայ , այս անգամ ոչ թէ կնոջը , այլ մարդուն , քերթողին , տկար ու զիւրազրգիտ հոգի , որ եղէգի պէս ամէն կողմ կը թեքի , Ռէմպոյ բանաստեղծ մըն է , դարապերջիկ երիտասարդ մը , որ կը տիրէ Վէոլէնի մօքին : Ու կը սկսին անկարգութիւնները , յիմարութեան , ցոփութեան ահաւելի կեանք մը , մինչև որ կինը յուսահատելով կը բաժնուի իր մէ : Ա՛լ Վէոլէն ինքզինքին տէրը չէ . թափառաշրջիկ մը , յոռի սողայ մըն է , որ իր պարկեշտ մարդու յիշատակները ապսէնթի բաժակին մէջ կը մոռնայ , մինչև վերջին զարհուրելի հարուածը , որով կը վիրաւորէ Ռէմպոյն , իր բարեկամը . . . :

Ու կը բանտարկուի Վէոլէն երկու տարի , եւ անկէ ետքը աներեւոյթ կ'ըլլայ : Ա՛լ ամէն մարդ մոռցած է զայն . տասներէինդ տարի մարդ չի խօսիր թշուառ դատապարտեալին վրայ : Բայց բարեկամներու ամենէն անկեղծը ունի իր քովը , զժբախտ օրերու միակ բա-

րեկամը , իր մայրը , որ կ'ընկերանայ իրեն այդ կամաւոր աքսորին մէջ :

1881ին է որ կը վերադառնայ նորէն Վէոլէն Բարիզ , եւ որդը Թիթեանիկ եղած է : Հին պառնասեաններու նեղ կեղեւին մէջէն նորասփեւտու բանաստեղծ մըն է որ դուրս կ'ելլէ , համակ նորութիւն , համակ հանճար : Հիները զայն չեն հասկնար . իր տաղերը կը վերլուծեն , կը մեկնեն , ու կը վճռեն թէ հո-վին սւ տերեւին անուշ մրմունջէն աւելի իմաստ չունին անոնք : Ընդհակառակը նորերը , Սէմպօլիստները , զայն վարպետ կ'անուանեն , որովհետեւ Վէոլէնի համար Սէմպօլիզմը գաղափարներու աղքատութիւնը ծածկելու պատրուակ մը չէ , ինչպէս ուրիշներուն համար , այլ նորոգումի բնական պէտք մը , անգիտակից շարժում մը հինցած ու մաշած դրութեան մը ծոցէն դուրս նետուելու զէպի աւելի անձանթ ու լայնածաւալ հորիզոններ :

Վէոլէն Սէմպօլիստներու գայրոցին մէջ մտցուց անկեղծութիւնը ծայրայեղութիւններուն եւ բնական տարօրինակութիւնները , որոնք կեղծիքի եւ ցուցամոլութեան երեւոյթ մը կ'առնեն ստէպ Պոտլէոի աաղերուն մէջ : Վէոլէնի նոր գործը La Sagesse (Իմաստութիւնը) միատիքականութեան հրաշալիք մըն է : յուզումներու , ազատ ներշնչումի քնարերգութիւնն է ամբողջապէս , ուր երկար , անհասնում ամեղայն մը կը թրթռայ Աստուծոյ ուղղուած : Արցունքի , հեծկլամանքի , երկրպագութեան բանաստեղծութիւն մը , խունկի մը անուշ մշուշին մէջէն երկինք բարձրացող , ուր իր սիրող հոգին ծիածանի մը գունապեղ վէտվէտումներով կը սարսռայ կրօնքին թեւերուն վրայ , եւ ամպերուն մէջերէն ընդերշմարտած տարտամ փթթումներուն եւ բուրումներուն հրայրքովը յափշտակուած՝ կը մոռնայ կեանքը , կը մոռնայ աշխարհքը Աստուծոյ գաղափարին փարելու համար : Խորունկ սէր մըն է որ զինքը Աստուծոյ կը տանի , տառապեցուցիչ զգայութիւն մը որ իր ոսկորները կը գողացնէ , թափառական հոգի մը որ մութին մէջ կը թարթափի եւ չի կրնար իր սիրոյ առարկային հասնիլ : Ու գետինը ինկած , երեսը հողին ու փոշին փակցուցած կը պաղատի , կը հեծկլտայ , կը կողկողի որ

ընդունի իր ապաշաւը : Հիանալի է այն երկար ազօթքը , որ հետեւեալ տողերով կը սկսի .

Ո՛վ Տէր , սիրով զես խոցեցիր ,
Վէրքը թըրթուուն է տակաւին ,
Ո՛վ Տէր , սիրով զես խոցեցիր :

Բայց այս ամէնուն մէջէն շէքսքերեան շունչ մը կուգայ կ'անցնի յանկարծ , եւ ահա՛նկի կերպով առոյգ ու կորովի զոյն մը կուտայ իր հեւացող պատկերներուն , իր տարտամ ու միզամած նկարներուն : Իր հիւանդագին նրբութիւններէն , մառախլոտ զղայութիւններէն , մարմող փայտներէն հսկայ յանդրոնութիւններ , ջղուտ հեգնութիւններ եւ քրմածին ու իսկապէս երեւակայութիւններ կը բղխին : Եւ թիթեռնիկին ծածանուտ ոտոտուումը արծիւին սերճ սաւառնումին կը փոխուի :

Իր այս կրօնքի եւ անկեղծ զղջումի թուականին կը յաջորդեն սակայն նոր մեղքի եւ նոր յանցանքի օրեր : Ա՛յ այնուհետեւ իր կեանքը բաժնուած է՝ մեղքին ու զղջումին ամէնէն սաստիկ ցնցումներուն միջեւ , եւ այս երկու մեծ կիրքերուն մէջտեղը կը տարուբերի . ինչպէս փրփուրը կոհակին վրայ , սնոր հետ թաւալելով ու բարձրանալով , եւ այս սնունդային կեւէջքին մէջ վայելելով զողջիւն չարչարանքին ահակի , վայրենի հեշտութիւնը : Հոգեկան այս տարօրէն վիճակին արդիւնքն են իր Parallèlement (Չուզահեւակի) քերթուածները , որոնք որքան յոռի այնքան անկեղծ եւ միամիտ են :

« Բարբարոս մը , վայրենի մը , մանուկ մըն է , կ'ըսէ Ժիւլ Լըմէթո իրեն համար , բայց այդ մանուկը այնպիսի երաժշտութիւն մը ունի հոգեոյն խորը , եւ օրեր կան ուր այնպիսի ձայներ կը լսէ , զոր իրմէ առաջ ոչ ոք լսած է : »

Ամբողջ հակասութենէ , հակադրութիւնէ կազմուած այդ տարօրինակ մարդը , անկեղծ իր ամէնէն եպերեկի գործերուն եւ ամէնէն զմայելի գրուածքներուն մէջ , կեանքը բզըկտող ներհակ զգայութեանց պայքարին առեւն , խենդի մը տպաւորութիւնը կը թողու ամէնուն , վրայ , սակայն հոգեբանները այրպէս չեն մտածեր :

Վէտէնին վրայ բարոյական յիմարութիւն չիկայ , կ'ըսէ Մաքս Նոռտաու , անդիմադրելի բնազդուով մը կը մեղանչէ ան , որովհետեւ բարոյական խենդը իր ոճիւրդ գէշ բան մը չի նկատեր . առաքինի գործ մը կատարելութեամբ կը գործադրէ զայն , ու ըրածէն գոհ կը մնայ : Մինչդեռ Վէտէն իր արարքներուն ճշմարիտ գիտակցութիւնը ունի , իր բնազդումին զէմ կը մաքաւի մինչեւ որ ալ չկարենայ դիմադրել , եւ գործողութիւնէն ետքը ահռելի յուսահատութեան մէջ կ'իյնայ զղջալով :

Ահա՛ գիտակից ստրկանքի գեղեցիկ սողերէն մէկը .

Երկինքն է հոն՝ երգիքէն վեր
Բիւ ու հանգաւա ,
Ծառ մը կ'օրէ երգիքէն վեր
Ոտերն առատ :

Երկինքին մէջ զանգակն ահա
Կ'երգէ հեզիկ
Ծառին վրայ թըռչնիկն ահա՛ ,
Կ'արձակէ ճիկ :

Տէ՛ր , Տէ՛ր , կ'անցնի պիտեղ՝ կեանքն ալ
Պարզ , համբօրէն ,
Եւ անվրդով այդ շըշուկն ալ
Կու գայ քաղքէն :
Ի՞նչ ըրի՞ր դուն , դուն որ հոս ես
Լարվո անքուն
Թաւմ՝ կեանքդ , ըսէ՛ , դուն որ հոս ես
Ի՞նչ ըրի՞ր դուն :

Ահա՛ ուրիշ մըն ալ իր ամէնէն իսկապիտատաղերէն .

Արցունք կ'իջնէ սրբախ մէջ
Ինչպէս քաղքին մէջ անձրեւ ,
Ի՞նչ դալկութիւն է անվերջ ,
Որ կը հոսի սրբախ մէջ :

Ահա՛ շըշուկ անձրեւի ,
Որ կը կռծէ հող , տանիք ,
Եւ սրբախ որ կը նեղուի :
Ի՞նչ քաղցր է երգն անձրեւի :

Արցունք կ'իջնէ անտեղի
Զըզուած , քանած սրբոյն մէջ ,
Ինչ դաւ չի կա՛յ նողկալի .
Եւ եմ սուգս է անտեղի :

Ամէնէն սուրն է ցաւի
Անդիտանալ թէ ինչո՛ւ ,
Աւանց սիրայ եւ գաւի ,
Աերաբս այնքան կը ցաւի :

Կարելի չէ իր հոյակապ քերթուածները ,
ամէնքն ալ հոս ներկայացնել , ոչ ալ ճշգրիտ
զաղափար մը տալ իր սուրբի, մարտիրոսի եւ
խուժողութ մարդու խառնուրդ էութեան վրայ,
ուր զգայութիւնները կը տիրեն , եւ զգա-
ցումները կ'ապստամբին , ուր մարմինը կը
մեղանջէ եւ հոգին կու լայ : Կարելի է ըսել
միայն իրեն համար թէ իր երկրին ժամանա-
կակից դրողներուն ամէնէն ինքնատիպը, ամէ-
նէն խանդավառը , ամէնէն զարմանալին է իր
ճշմարիտ բանաստեղծի յափշտակութիւննե-
րովր, անսուստ յուզումներովը . հզօր ներշնչ-
ումներովը , որոնք լուստպսակ մը կը յօրի-
նեն իր արտացայտ լայն տաղանդին շուրջը ,
զարավերջիկ Ֆրանսայի հեւացող վտիտ բա-
նաստեղծութեան հորիզոնին վրայ :

Յառաջիկայ թիւէն յարգելի Տթթ. Գ.
Դաւիթեան պիտի սկսի յօդուածներու շարք
մը «Կնոջ եւ իր գեղեցկութեան առողջա-
պահական միջոցներուն» վրայ Կանանց Աշ-
խարհ բաժնին տակ , որոնք վստահ ենք թէ
մեր ընթերցողուհիներէն մեծ ուշադրու-
թեամբ պիտի կարդացուին :

Կ Ի Ի Ս Թ Ա Վ Մ Ո Ռ Օ

Նկարչութեան խորհրդական դըպ-
րոցին գլխաւոր ֆրանսացի ներկայացու-
ցիչներէն մէկը, Կիւսթավ Մոռօ, իր տունը
եւ բոլոր նկարչական գործերը կտակած
է Ֆրանսական կառավարութեան , եւ
այն պարագային որ կառավարութիւնը
կ'ընդունի այս կտակը իր բոլոր գոյ-
քերը կը կտակէ Բարիզ քաղաքին :

Ֆրանսական կառավարութիւնը սա-
կայն արդէն ընդունած է Մոռօյի կը-
տակը եւ նոյն իսկ կտակարար նշանա-
կած է Հանրի Ռուբ , որուն աշխատու-
թիւնը պիտի ըլլայ Մոռօյի տունը
պատկերներու թանգարանի մը փոխել :
Մոռօ ձգած է 700 իւլաներկ , 300 ջրա-
ներկ եւ 5000 զանազան նկարներ , մեծ
անկանոնութեան մէջ , զորս կարգի
դնելու համար ամբողջ տարի մը հա-
զիւ պիտի բաւէ : Կը կարծուի որ Մոռօյի
տան մէջ գտնուած երկու մեծ աշխա-
տանոցին սրահները չպիտի բաւեն ե-
ղած պատկերները կախելու համար ,
ուստի որոշուած է տան պարտէզին մէջ
ուրիշ սրահ մըն ալ շինել տալ :

* * *

Վիէննայի մէջ նկարչական մեծ ցու-
ցահանդէս մը բացուած էր , Աւստրիոյ
յիսնամեայ նկարչական գործունէու-
թեանը յիշատակին : Այս ցուցահան-
դէսը այցելողները զարմացնելու աստի-
ճան չատ են եղած :

Բաղմամսեայ ցուցատրութենէ մը
վերջ , գեկտեմբերի սկիզբներուն փակ-
ուած է այցելուներու մաքին մէջ
գեղարուեստական հաճելի ժամանցի
մը յիշատակը ձգելով :

Ե Շ Ո Ւ Ն Ն Պ Ն Յ Ո Ւ Ը Ն Ն

ԴՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ, (Խարբերդ)



Լեռներն են , ա՛խ , այս լեռները հրմայիչ
Որոնք ծուխի , մանիշակի գոյնով բաց
Ազգկայ ու Երագի մը չափ բովիչ
Հոգուս վայրի այլ գիրգ հերքումն են եղած :

Արշալոյսի վարդ մըշուշի մը մէջէն
Որ ետին կը բողու գիշերը փախչող
Անոճ հոգւոյս հմայքն իրենց կը կանշեն
Խորհրդաւոր բայց կենդանի ալ լեզուով :

Եւ ես ինչպէս Արծիւր որ քնաբաց
Կ'երգէ Բմբաստ իր տարփանքը սրբաւնով
Նայելով վեհ այս լեռներուն մրբաւնած
Կը հիւսնա իմ երգերս անգարդ ու մրուայ :

Զանոնք գրրկող մուր ու տարտամ կապոյտն այլ
Ներշնչում մը , բան մը ունի անխնաց
Ուր ինձ ծանօթ բայց միշտ բազումն ու գաղտնի
Կը խլրրտի խորհուրդ մը լուռ ու կամաց :

Երկա՛ր երկա՛ր , կ'երկարէ լեռն իր շրդբան
Եւ կապոյտն ալ կը բանձրանայ անկայուն
Անուշնակով հայուածքին պէս աղջկան՝
Դառնակով խոր , հրապուրիչ եւ անհուն :

Անծանօ՛քր : կը փնտռեմ քէ ի՛նչ է՝
Ծածկուած այս լեռներուն մէջ ամայի
Որոնց վրայ եղնիկ մ'երկչոտ կը նրնչէ
Կամ ծաղիկ մը անցնող ամային կը նայի :

Անծանօ՛քր , ինձի այնպէս կու գայ քէ
Դիցուհի մ'է , հին Աստուածն այս լեռներուն ,
Հիմայ անտես , սառած բիւրե՛ղ-մըշուշէ ,
Այս կապոյտին մէջ մարնացած երերուն :

Դիցուհի մը որ կապոյտի է փոխուէր ,
Կապոյտի մը , անբոջային , բափանցիկ ,
Եւ ինքզինք մարդոց աչքէն չի պահեր ,
Միշտ խուսափող , այլ միշտ չբնաղ , գեղեցիկ :



ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԿԷՍԻՆ

Մ. Շ.

Ո՛չ ամուրիները եւ ո՛չ ալ ամուսնացեալները, ամենամեծագոյն մասամբ, կրնան ըսել այսօր, թէ ամուսնական կեանքը մեր մէջ, բաղձածուած այն զրախան է, ուր ամուսնիներու դաշն կենտկցութիւնը մոռցնել կուտայ իրենց արտաքին բոլոր տհաճութիւնները եւ տաղաւակները:

Մեր ընկերական ներկայ կացութիւնը, մեր ընկերութեան ամենէն մեծ վերքերէն մէկն է թերեւս, որուն համար վերջապէս լուրջ մտահոգութիւն մը պէտք է ունենանք աւելի լաւ վիճակներ ձեռք անցընելու համար:

Կիրն մեր մէջ՝ չունի ընդհանրապէս այն բոլոր արուեստները որոնցմով իր կանացի շնորհները աւելի կը շատնան, եւ իբրեւ ամուսնացած կին ամուսնոյն հետ վարուելու տաղանդը ձեռք կ'անցընէ: Յետոյ իբրեւ մայր ալ իր զաւակները պատակցութեամբ կ'թելով, ազգի մը դաստիարակութեան հաւաքական մեծ դործին մէջ նաեւ իր բաժինը բերած կ'ըլլայ:

Հին ճշմարտութիւն մըն է թէ նոր ծնող սերունդին ամենէն բնական ու ամենէն մեծ պարտքը ընտանեկան յարկն է, իր ամենէն բնական ու ամենէն մեծ դաստիարակովը, մայրովը: Իսկ մեր ընտանեկան պայմաններուն ծանօթ մէկը վտանգ չեղածով կրնայ յայտարարել թէ մեր մայրերը՝ զուրկ իրենց ամուսնիները վարելու, պիտի ըսէի, պերելու տաղանդէն, չունին նաեւ ըմբռնումը իրենց զաւակները դաստիարակելու, եւ իրենց զաւակայ վրայ ազդելով ընտանեկան յարկը անոնց սիրելի դարձնելու, նոյն իսկ իրենց անչափահասութեան տարիքէն վերջն ալ:

Մ. Նաշանդներու մէջ, առողջ կրթութիւն ստացած հասուն աղջիկներ եւ ամուսնացած կիներ, իրենց համար խմբագրուած թերթեր ունին, որոնց մէջ ուշի ուշով կը հետեւին այն բոլոր յոգեւածներուն, որոնցմէ

կրնան սովորի իրենց ընտանեկան յարկը ամուսնոյն եւ զաւակաց հրապուրիչ դարձնելու բոլոր միջոցներն ու զաղտնիքները, ու երբ երջանկութիւնը չի տրեւր ընտանեկան յարկի մը առկ, Ամերիկուհի սը համոզուած է թէ այդ դժբաղդութեան պատճառը, կնոջ՝ ընտանեկան յարկը կառավարելէն (ménage) չի հասկնալն է:

Թերեւս մենք չկրնանք կիներու համար ալ օգտակար թերթեր ունենալ, բայց գոնէ մեր թերթերուն մէջ բաժին մը կրնանք յատկացնել կիներուն, մարդկութեան լաւագոյն կէսին, ու այդ բաժինն մէջ լուրջ ու բանիւրուն յոգեւածներով ցուցնել թէ ինչպէս կիները առողջ եւ հրապուրիչ պէտք է ըլլան, թէ կիրն իբրեւ ամուսին իր մեծ պատասխանատուութեանը մէջ ինչպէս կարող է չը թերանալ, ու յետոյ իբրեւ մայր ինչպէս պէտք է խնամէ զաւակները ֆիզիքապէս ու բարոյապէս:

ՄԱՍԻՍ, իր ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՐՀ բաժնին տակ ամեն անգամ պիտի հրատարակէ, աջակցութեամբ մասնագէտներու, օգտակար յոգեւածներ, որով մեր քոյրերը, կիները, մայրերը առիթը պիտի ունենան իբրեւ կին, իբրեւ ամուսին եւ իբրեւ մայր սովորի այն բոլոր միջոցները, որով զմեզ աւելի երջանիկ ընտանեկան յարկերու տակ պիտի կրնան առաջնորդել:

Այն մարդիկը որ դժբախտ ընտանեկան վիճակ մը ունին ամենէն, անուշ, ամենէն անարիւն մարդերն են:

Մանաւանդ կիները պէտք է ջանան, իբրեւ կին, իբրեւ ամուսին, իբրեւ մայր լաւագոյն ընտանեկան վիճակ մը պատրաստել մեզի, ասով մեր ընկերական կեանքը աւելի երջանիկ դարձնելու համար:

ԿԻՆԵՐՈՒՆ ՀԱԳՈՒՍՏԸ ՏԱՆ ՄԷՋ

Ն Ա Ր Կ Ի Ս

Դուքսի համար չբեղ հագուստներ չինե
տալով միայն պէտք չէ բնաւ որ մեր մայրերն
ու կիները տուներու մէջ իրենց ամուսնոյն
ու զաւակաց աչքին առջեւ փնթի, թափթը-
փուն զգեստներով պատին, ճաշակաւոր, տան
պարզ եւ մաքուր զգեստներով կին մը
չատ աւելի հաճելի է երբ ամուսնոյն եւ իր
զաւակաց վրայ ալ ստով բարոյական եւ գե-
ղազիտական շատ աւելի լաւ ազդեցութիւն
մը կրնայ ունենալ : Տան մէջ կին մը ճաշա-
կաւոր ու սիրուն երեւալու համար սակայն
բնաւ պէտք չունի աւելորդ ծախքեր աւելցը-
նել իր ամուսնոյն պիւտճէին վրայ : Ընդհա-
կառակը դուքսի համար ունեցած հագուստ-
ներուն չքեղութենէն քիչ մը պակսեցնելով
ինչ որ թերեւս աւելի ճաշակաւոր պիտ
դարձնէր այդ մետաքսապատ եւ սնդուռէ ըզ
դեստները , կրնային մեր տիկինները տուն
մէջ գործածած իրենց հագուստներուն քիչ մ
աւելի հոգ տանել : Ես տեսած եմ շատ մը կի-
ներ որոնք դուքսի համար ձմեռուան եւ ա-
մառուան մէկ ձեռքէ աւելի բազմաժան հա-
գուստներ ունին եւ որոնք դուքսը տեսնուած
ատենին իրենց հագուստներուն տուած չա-
փազանց կարեւորութեամբը աւելի պուպրիկ-
ներու կը նմանին , իսկ իրենց ընտանեկան յար-
կին տակ հեռու են տանտիկնոջ մը որ եւ է
մէկ նմանութիւնը ունենալէ :

Թերեւս կիներ գտնուին առարկող թէ
իրենց տնական , խոհանոցի աշխատութիւն-
ները կատարած ատեն չեն կրնար հաճելի
երեւոյթ մը ունենալ : Այսպէս մտածող կի-
ները կրնան ապահով ըլլալ թէ դեռ չեն գի-
տակցած իրենց մեծ դերին , ընտանեկան
յարկին տակ : Կինը , մասնաւոր նորատի
կինը թէ իր ամուսնոյն եւ թէ իր զաւա-
կացը համար , ընկերական յարկի ամենէն
մեծ հրապոյրն է : Հրապոյրները թիթեռնիկ-
ներու կը նմանին , որոնք միշտ ծաղիկները
կը փնտռեն . անոնց մէջ զիրենք զիտողներու
աչքին աւելի երփներանգ երեւնալու հա-
մար : Կիներն ալ իբրեւ ընտանեկան հրա-
պոյրներ , իրենց պարզ , քնտանեկան սեթե-

ւեթներուն պէտք ունին , ատով աւելի հրա-
պուրալից երեւալու համար :


Մեր մէջ , կիները ընդհանրապէս շատ
անխնամ են իրենց առանին երեւոյթներով :
Շատ անգամ կը տեսնեն նոյն իսկ սիրուն
կիներ որոնք իրենց առաւօտեան արդուզար-
դով տգեղ կ'երեւան մեր աչքին :

Մեր կիներու մէջ բնաւ սովորութիւն չէ
եղած , առաւօտուն ամենէն առաջ իրենց
մազերը յարգարելու եւ իրենց առանին շըր-
ջադղեալ հագնելով վայելուչ կերպարանք
մը ստանալու : Առանին վայելութեան մը
պահանջը երբեք գոյութիւն չունի մեր կա-
նանց արտին մէջ ուր սակայն շատ սեղ
կրնանք գտնել արտաքին պոռոտ սեթեւեթ-
ներու պահանջին համար :

Յաճախ առիթը պիտի ունենանք շեշ-
տելու թէ ընտանեկան յարկին տակ ինք-
զինքնին յարգել տալու արուեստը չունին
մեր կիները , ուրկէ ամենէն աւելի տան-
ջուողները իրենք են նորէն :

Պատիկ պատճառները իրենց մեծ հետե-
ւանքները կրնան ունենալ աշխարհային կեան-
քին պզտիկութիւններուն մէջ : Մեր կիները
իրենց ամուսինները եւ զաւակները իրենց
ամենամտերիմ անձնաւորութիւնները նկա-
տելով թերեւս բոլորովին աւելորդ գտնեն
ընտանեկան պարզ սեթեւեթները իրենց մը-
տերիմներուն հանդէպ : Այս կէտը նորէն կը
ցուցնէ թէ մեր կանանց սեռային բնազդը
եւ հոգեբանութիւնը որչափ թուլ է : Պէտք է
միանգամ ընդ միշտ ընդունիլ թէ մարդկային
հոգին փոփոխամիտ ազու մը պէս է եւ միշտ
նոր առիթներ կը փնտռէ իր խօլ տարիանք-
ներուն դոհացում տալու համար : Մեր կի-
ները շատ քիչ զբաղեցուցած է այս ճշմար-
տութիւնը , որոնք կը կարծեն թէ պէտք չի
կան այս բոլոր միջոցներուն իրենց ընտանեկան
հրապոյրները վառ պահելու համար :

Պարզ եւ ճաշակաւոր հագուած մայր մը
իր զաւակներուն վրայ ալ բոլորովին տարբեր
տպաւորութիւն կ'ընէ քան թէ եթէ անիկայ
անճաշակ եւ թափթփած հագուստներով ըլ-
լար : Մաքուր ու պարզ հագուած մայր մը
մաքուր ու պարզ զաւակներ միայն կրնայ
ունենալ , ինչ որ պզտիկ առաւելութիւն մը չէ ,
աղտոտ եւ անճաշակ մանուկները անզգայ եւ
կեղտոտ բնաւորութեան տէր մարդիկ կը
դառնան : Պարզ եւ ճաշակաւոր հագուած
մայրեր ընկերական այս տեսակ չարիքի մը
առաջը մատմբ առած պիտի ըլլային :



ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԽԱՂԻՆ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ

Խաղը մանուկներու զբաղումն է, անիկայ աշխատութիւն եւ դաս է միանգամայն, եթէ բնական եւ ուղիղ կերպով առաջնորդուի։ Մանկութեան ամենէն առջի տարիներուն խաղը ուղղակի օգտակար նպատակ մը չունի, այլ աւելի միջոց մըն է, որով մայրը տղուն ուշադրութիւնը զինքը անհանգիստ ընող բանի մը վրայէն վերցնելու իր միջոց կրնայ դորձածել, բայց նոյն իսկ այս ամենէն առջի խաղերուն մէջ անդամ տղուն ուշադրութիւնը զարգացնող, մտապատկերներ կազմող միջոցը կրնան ըլլալ այն միայն ժամանակ անցընելու համար կարծուած խաղերը, որոնք աղբիւրը կրնան ըլլալ տղուն մտաւոր զարգացման, եթէ անիկայ սկսի հաճոյքով խաղալիքներուն հետ զբաղիլ ու հետեւիլ անոնց բոլոր ձեւափոխումներուն։ Ասով տղուն ուշադրութիւնը կը սկսի դործել եւ խաղալիքներու ձեւափոխութիւններուն առթիւ նոր մտապատկեր յառաջ կուգան տղուն ուղեղին մէջ։

Խաղարու ատեն մանուկը իր եւ առարկաներու մէջ զոյգութիւն ունեցող պարագաները կը գտնէ, որով այն բոլոր խաղալիքները որոնք իրենց յատկութիւններով եւ վիճակներով միշտ միեւնոյնը կը ներկայանան մանկան, միեւնոյն գոյնով, միեւնոյն ձեւով եւ միեւնոյն շարժումներով, վերջապէս կը յոգ-

նեցնեն զինքը, ատոր համար այդ տեսակ խաղալիքները բաւական ատեն պահելէ վերջը միայն եթէ նորէն մանկան ներկայացնենք նոր խաղալիքի մը բովանդակ հրապոյրները կը վերստանայ եւ մանուկը զգայարանը ներու զրդիւով կը վերսկսի իր մտաւորական աշխատութիւնը՝ հետեւելով խաղալիքին ձեւին, գոյնին ու շարժումներուն բոլոր յատկութեանցը։ Ամեն խաղալիք իր յատկութիւններուն համեմատ, կարճ կամ երկար ժամանակէ մը վերջը տղուն համար կորսնցնելով իր հրապոյրը կը կորսնցնէ նաեւ իր՝ տղուն միտքը զարգացնող բոլոր յատկութիւնները։ Տղաքները իրենց վառ երեւակայութեամբ իրենց ձեռքին տակ դանուած բոլոր անշունչ առարկաները իրր շնչաւոր էակներ կը նկատեն, անոնց մէջ կը տեսնեն իրենց մտապատկերին մէջ ծնած կեանքի բոլոր երեւոյթները։ Թիթեղէ կենդանիները ու դաճէ պուպիկները մանուկներուն համար շնչաւոր էակներ են, որոնք կը քալեն, կ'իջնան, կը խօսին, կուլան, կը խնդան, կ'ուզեն կամ չեն ուզեր, խելօք են կամ անհանգարտ, կը խաղան, կը քնանան, եւ այս ամենքը իրենց հետ։ Մանուկները իրենց երեւակայութեամբ իրենց եւ խաղալիքներու միջեւ արկածներով լեցուն ամբողջ կեանք մը կը հիւսեն։ Ուրեմն կը տեսնենք թէ խաղը եւ

խաղին առարկան իբր առաջին ընկերակիցը մանկական հոգւոյն՝ մեզ միջոցը կուտայ ասով մանկական միտքը արթնցնելու ու մայրական ճիշդ առաջնորդութեամբ մը մանկան համար իբր գերազոյն՝ կրթական առիթը գործածել, աղուն երեւակայութեան ու մտապատկերներու աշխարհէն կամայ կամաց իրականութեան յստակ բմբռնումի ու աւելի լայն գիտակցութեան մը հասցնելու համար զինքը :

Խաղը ամենէն առաջ իր մտապատկերով եւ վիճակովը աղուն հոգեկան կողմը կը զուարճացնէ, ու յետոյ իր զգայարանքները կը գրգռէ : Տղան իր եւ առարկային միջեւ այդ հաճոյական յարաբերութիւնը շարունակել կարենալու համար կը սկսի առարկային հետ խաղալ, որ իրեն համար առարկային հետ տպւիլ ըսել է : Եթէ խաղալիքը, ժամանակ անցնելով, մանկան գիւտեր ընելու պահանջին այլ եւս գոհացում չի կարենայ տալ, այն ատեն առարկային եւ իրեն մէջ հաճոյական յարաբերութիւնը կը դադրի, անիկայ կը կորսնցնէ իրեն համար ամեն կարեւորութիւն, նոյն իսկ անհաճոյ կը զառնայ իրեն, բայց մանուկը նախ քան իրեն անհաճոյ դարձած առարկան մէկ կողմ նետելու, կտորելով կը փորձէ նոր յատկութիւններ գտնել այդ խաղալիքին վրայ, եւ կ'ուրախանայ ոչ թէ զայն կտորած բլլալուն, այլ կտորելով արդէն անհաճոյ դարձած առարկան, զայն նորէն հաճոյալի վիճակի մը փոխած բլլալուն համար : Այս պատճառաւ այն առարկաները որ չեն կտորիւ կամ ձեւափոխումներ չունին, պզտիկ մանուկները անմիջապէս կը ձանձրաւ նան անոնցմէ : Բայց խաղալիքները կտորելով անոնց ձեւափոխութիւնները տեսնելու բնազդը կրնայ իր զէշ հետեւանքները ունենալ եթէ մայրական խոստուն հսկողութիւն մը չառաջնորդէ զայն : Մօր պարտաւորութիւնն է աղուն խաղալուն հսկել եւ նախ այնպիսի խաղալիքներ տալ մանկան որոնք առանց կտորուելու շատ մը ձեւափոխութիւններ կը ստանան : Եթէ մանուկը այս առարկաներէն ալ ձանձրանայ, մայրս պէտք է նոյն առարկային նոր ձեւերը ցուցնէ, եւ եթէ այլ եւս չունի, աղուն աչքէն հեռացունէ զայն :

Փոփոխականութիւնը աղուն հոգիին համար անհրաժեշտ է եւ ուր որ կը զաղրի մանկան կողմէ անշունչ իրերը չնշաւորելու գործը, հոն այլ եւս մանուկը կը սկսի ոչնչացնել ամեն բան :

Քանի որ խաղը աղուն մտաւորական կարողութիւնները կը կրթէ, ուրեմն պէտք է որ խաղի ատեն մանուկը առաջնորդող առաջին հակումը ոչ թէ կտորելու, այլ շինելու հակումը ըլլայ, ուրիշ խօսքով ձեւի եւ կազմաւորման զգացումը պէտք է խաղի միջոցով զարգացնել աղուն մէջ :

Եթէ մանուկը իր տարիքին մէջ քիչ մը յառաջանայ, այն ատեն բոլորովին անշունչ առարկաները զինքը չեն կրնար գոհացնել : Պէտք է որ աւելի կենդանութիւն բուրդ, իրեն հետ աւելի նմանութիւն ունեցող իրեր ըլլան իր խաղալիքները, որով երեւակայութեան միջոցով մը պէտք չի մնար զանոնք չնշաւոր նկատելու համար : Այս տարիքին մէջ այլ եւս ուրիշ աղաքներ պէտք են, որոնց հետ մեր մանուկը կրնայ հաճոյքով խաղալ :

Կարծուածին չափ զիւրին չէ մայրերու համար իրենց աղայոց խաղերը առաջնորդելը, ասով մտապատկերները արթնցնելու, եւ միեւնոյն ատեն նաեւ երեւակայութիւնը չափազանց զարգացնելու համար : Այս կէտին մէջ, նոյն իսկ կրթուած մայրերէ շատերը յաճախ կը սխալին : Մանկան մը հոգեկան արամաղութիւնն է որ անշունչ առարկաներուն՝ մարդկային կամ կենդանական յատկութիւններ, յարաբերութիւններ, վերջապէս դործողութիւններ կը վերագրէ : Եթէ մայրերը այս կէտին մէջ աղուն օգնեն իր երեւակայութիւնը աւելի վառ պահելու համար, որպէս զի անիկայ առարկաները կարող բլլայ հասկընալ, ասով քիչ ատեն վերջը կը նշմարեն որ աղան առարկաներու մասին սխալ ըմբռնում մը իւրացուցած է, որուն հետեւանքն է որ մանկութենէն անձնարարութեան եւ ստեղծարարութեան կ'առաջնորդուի աղան :

Մայրերը պէտք է որ միշտ իրենց աղուն մտապատկերներու աշխարհը հեքեաքներու եւ պատմութիւններու աշխարհէն ճշմարտութեան եւ իրականութեան առաջնորդեն, որքան որ աղան մաքրով աւելի զարգանայ եւ իրականութիւնն ալ իրեն համար ա-

ւելի կենդանանայ եւ աւելի շահագորդիւ
դառնայ, եթէ կ'ըսենք թէ մայրը պէտք է
տղուն խաղին հսկէ եւ առաջնորդէ անոր,
սակայն ասկէ պէտք չէ հասկնալ թէ մայրը
խստութեամբ հրամայէ խաղին ուղղութիւնը:
Այս տեսակ խստութիւն մը՝ տղուն երեւա-
կայութիւններու աշխարհին համար չափա-
զանց նեղ պիտի դար, ու ազատ ինքնազար-
գացման համար միայն աննպաստ հետե-
ւանքներ կրնար ունենալ այս, որովհետեւ
տղան ամենէն աւելի երջանկութեամբ եւ խե-
ացիութեամբ կը խաղայ իր նմաններուն հետ:
Դրեթէ բոլոր խաղերը հետեւողու-
թիւն են այն բոլոր զբաղումներուն, զորս
մանուկը տեսած է իրեն շուրջը գտնուող
չափահասներուն քով, եւ անոնցմէ ընդօրի-
նակած, ու հիմայ կ'ուզէ, իր հասկցածին հա-
մեմատ զանոնք կրկնել: Ուրեմն պէտք չէ որ
տղուն ներկայութեան այնպիսի աշխատու-
թիւններ կատարենք, որոնց նմանելով, տղուն
խաղերէն միայն վնասներ կրնան յառաջ գալ:
Ո՛րքան յաճախ, միայն նմանողութեան տենջէն
բռնուած, տղաքներ կրակի եւ լուցկիի հետ
խաղալով կեանքերու եւ ինչքերու մեծ
վնասներ առաջ բերած են:

Եթէ տղան իր սարիքին եւ մտաւո-
րական զարգացման մէջ այնքան առաջ գա-
ցած է որ արդէն սկսած է խաղակիցներուն,
եղբայրներուն եւ օտար տղաքներու հետ յա-
րաբերութեան մէջ մտնել, այն ատեն պէտք
է իր խաղերուն հետեւիլ, առանց խանգարե-
լու իր արամագրութիւններն ու փափաք-
ները, իր խաղի մէջ ցոյց տուած հակումնե-
րը բարոյական տեսակէտէն՝ նկատողութեան
առնելով: Որովհետեւ ոչ մէկ ուրիշ պարտա-
գայի մէջ առանձնայատկութիւնները եւ հա-
կումները, որոնք ասպագային նկարագիրը պի-
տի կազմին, այնքան պարզ կերպով կ'երեւան
որչափ տղուն խաղերուն մէջ: Յետոյ պէտք
է պատանին եւ աղջկան՝ իրաւունք տանք
իրենց մասնաւոր հաճոյքները ունենալու հա-
մար: Պատանին՝ աւելի առնական, եւ աղ-
ջիկն ալ կանացի զբաղումներու պիտի ուզէ
հետեւիլ: Եթէ քոյր եւ եղբայր իրարու հետ
սկսին խաղալ, խօսին պէտք է սկսիլ պա-
տանին քաղաքավարութեան, զգոյշ վերա-
բերման վարժեցնել զէպի իր քոյրը, եւ աղ-

ջիկն ալ աւելի քաղցրութեան եւ հեղութեան,
ու երկուքն ալ փոխադարձ կերպով զէպի
իրար օրոգ, խաղաղասէր բարեկամութեան
մը: Տղաքներու խաղին ատեն պէտք է նա-
եւ ուշադիր ըլլալ որ ազատութեան չխա-
ղան, եւ պէտք է զիրենք զարչեցնել ազատ-
տութիւններէ: Ազատութեան հետ եւ աղ-
տոտութեան մէջ ըլլալը կը նշանակէ նաեւ
ազատս հոգի մը:

Բան մը ճանչնալու հետաքրքրութիւնը
որ իբրը սովորական հետաքրքրութիւն կը
սկսի, տարիքով յառաջացած տղաքներու քով
յաճախ պատճառը կը դառնայ, որով այս
տղաքները այլ եւս չեն կոտրեր առարկաները
այնպէս ինչպէս վերը ըսինք, առարկային
նոր ձեւափոխութիւններ եւ նոր յատկու-
թիւններ տալու համար, որոնք իրենց հա-
մար նոր գրգիռներ են, այլ առարկան կարե-
ւի եղածին չափ մինչեւ իր խորը ճանչնալու
համար, զոր օրինակ, կը կոտրեն ժամա-
ցոյց մը կամ մեքենայ մը, չարժան եւ աղ-
մուկի պատճառը հասկնալու համար, կը
փեթտեն գեղեցկազոյն ծաղիկը, ատով ծաղ-
կին բաժակը զիտելու համար, ուրիշ
զոյնզոյն տերեւները անիմանալի պատ-
ճառով մը յառաջ եկած են, Որպէս զի այս
զիտնալու եւ հետաքրքրութեան զգա-
ցումը չի փոխուի ամէն բան քայքայելու
պահանջի մը, բնաւ նպատակայարմար չէ որ
տղաքներուն՝ իրենց հասակին առաջին տա-
րիներուն մէջ՝ այն տեսակ խաղալիքներ
տրուին, որոնք իրենց մէջ տղան համար
ներքին գաղանիք մը կը բովանդակեն:

Տղան կ'ուզէ բան մը ստեղծել, կազմել,
յառաջ բերել, ու սուր համար պէտք է նախ
իր ունեցածը ջնջէ: Փլցուած խաղալիք չէնք
մը նոր էն չինելով շատ աւելի հաճոյք կը զգայ
տղայ մը, քան թէ չինուածը երկար ատեն
դիտելով: Ո՛րքան յարմար են տղայոց հա-
մար խաղալիք չէնքերու առուիւրը, որոնց
միջոցաւ մայրը միշտ առիթ ունի շինու-
թիւնը բացատրելու, ու նաեւ շինութեան
յարակից մտապատկերն ու գործերը տղուն
մաքին մէջ զարթոյցանելու: Նաեւ այն տե-
սակ պարագաներու մէջ ուր տղուն չափա-
զանց մէկ պահանջը առարկայ մը, ըլլա
խաղալիկ կամ ծաղիկ, կը քայքայէ, պէտք,

է որ մայրը սոսոր յարակից կերպով անոր մէջ զտրթուցանէ կորուստի գաղափարը : Եւ իրերը պահելու հոգածութիւնը , ու աղուն սորվեցնէ բնութեան բոլոր տառականերուն արժէք մը ունենալը :

Մտքի եւ զգացումներու զարգացման համար շատ յանձնարարելի է որ տարիքի մէջ քիչ շատ յառաջացած աղաքները պարտէզներու մէջ աշխատցնենք , սերմեր ցանել տալով եւ կամ ընտանի կենդանիներու ձագերու ինամքը իրենց յանձնենք , պէտք եղած տունը եւս իրենց օգնելով : Այն տեսակ աղաքներ , որոնք կենդանիներու հետ կը զբաղին ու ինքզինքնին անոնց ինամքին կը նուիրեն սրտով ու մտքով շատ աւելի արագ կը զարգանան ու աւելի ազնիւ կ'ըլլան քան թէ այն աղաքը որոնք միայն գործարաններու մէջ չինուած ցուրտ խաղալիքներու վրայ իրենց ժամանակը կ'անցընեն :

Ինչ որ խաղի ստեն աղան կը մղէ բան մը մէջ տեղ հանելու , մանկան մէջ հետզհետէ կ'արթնցնէ գործունէութեան փափաքը , ու խաղը առով կ'ըլլայ նախապատրաստութիւնը բուն աշխատութեան :

Պէտք է ջանալ որ եթէ կարելի է շատ մը խաղալիքներ աղան ինքը ձեռքովը չինէ , թռուցիկ , փայտեայ եւ քարթօնէ առարկաներ , եւ այլն : Հոգ չէ թէ աղան իր առջի փորձերուն մէջ չի յաջողի , բայց ժամանակ անցնելով այդ փորձերը իր ճարտարարուեստական կարողութիւնները կը զարգացնեն :

Նաեւ պէտք է նկատողութեան առնել աղուն տարիքը , երբ իրեն համար խաղալիքներու ընտրութիւնը կ'ուզենք ընել : Խաղա-

լիքները պէտք է աղուն տարիքին համապատասխան ըլլան , ու յետոյ իբրեւ խաղալիք , առարկաները մանկութեան տարիքին անյարմար յատկութիւններ չունենան , որոնցմով աղաքներու երեւակայութեան կարողութիւնը եւ ճաշակը կրնայ վնասուիլ : Տղաքներու ձեռք արուած բոլոր խաղալիքները որոնք մարդիկ , կենդանիներ եւ երեւակայական տիպարներ կը ներկայացնեն , պէտք է գեղեցիկ եւ ազնիւ արտայայտութիւն մը ունենան , հակառակ պարագային գեղեցկութեան զգացումը իր խանձարութիւն մէջ կը սպաննուի աղուն քով :

Ինչպէս աղուն տարիքը նմանապէս իր զարգացման կարողութիւնը հետզհետէ կը յառաջանայ , ուստի պէտք է խաղալիքներու համար այն տեսակ առարկաներ ընտրել , որոնք աղուն նոր գաղափարներ կը թելադրեն եւ մօրն ալ առիթը կուտան իր դաստիարակի աշխատութիւնները աւելի լայն սահմաններու մէջ շարունակելու : Մանկան յառաջացած տարիքին մէջ խաղալիքներու միջոցով իրական աշխարհը բացատրելը ամենէն էական կէտն է :

Վերջապէս մայրերը երբէք պէտք չ թանկագին առարկաներ իբրեւ խաղալիք իրենց աղայոց ձեռքը տան , որովհետեւ ամենէն աժան առարկան ալ արդէն բաւական է եթէ այն ճիշդ ընտրուած է , մանաւանդ որ աղան կը սովորի նաեւ առարկաները ոչ թէ իրենց յարաբերական արժէքէն դատել , այլ անոնց պերճանքի առաւելութիւնները կը սկսի գնահատել , որ զինքը ապագային անպարծութեան կ'առաջնորդէ :

ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ՄԻՋՔԻԷՎԻՉԻ ՀԱՐԻՒՐԱՍԵԱԿԸ

Այս տարի Բօլժոնիս կը տօնէ իր ամէնէն մեծ ազգային բանաստեղծին, Ադամ Միճքիէ-վիչի հարիւրամեակը՝ որուն համար արդէն երկու արձան կանգնած է, մէկը Վարչաւիոյ եւ միւսն ալ Քրաքովիայի մէջ :

Միճքիէվիչ Բօլժոնիոյ համար եղած է այն թեւատարած հոգիներէն մէկը՝ որոնք իրենց սրաին ըմած երազը բովանդակ ժողովրդի մը երախներուն ներարկելու գերադոյն կոչումը ունին :

Միճքիէվիչ 1798 ին ծնած է Լիթւանիոյ մէկ գաւառակին, բնութեան ամէնէն տարօրինակ եւ ամէնէն այլակերպ ու մեծոգի մէկ անկիւնին մէջ՝ ուր բերնէ բերան տարտոնուած ժողովրդական երգերէն ու աւանդութիւններէն քամած է իր գործերէն չատերուն հոգին ու սիրտը : Այդ գործը բնավայր մըն է ամէն բանէ առաջ ալապուճուկներու, բարի եւ չար ոգիներու, պարիկներու, նայեալներու եւ դեւերու, որոնց հաւատքը մօրմէն առած է, մօրմէն ծծած է տղու միամիտ օրերուն, եւ որոնց երբեմն չար, երբեմն բարի, լուսազարդ կամ խաւարունակ յիշատակը պահած է մինչեւ վերջին օրերը :

Միճքիէվիչ ամենէն յորձանուտ, ամէնէն յուզուած կեանքերէն մէկը ունեցած է եւ միեւնոյն ատեն եղած է ամէնէն տառապողը, — սրտով մանաւանդ, եւ ամէնէն աւելի անտանելի զրկանքները կրած է իր կէս դարու զուածքին մէջ :

Հաւատարիմ իր ցեղին հոգիին, սկսած է իր բանաստեղծական արտադրութեանց առաջին թերթիկները պաճուճել ժողովրդական երգերու : հաւատարիքներու եւ սովորութեանց հարազատ պիտակումով մը, որ չատանկեղծ գործ մը արտադրել տուած է իրեն, պալլատներու եւ վիպերգներու շարքի մը մէջ :

Սկսնակի վարանոտ քայլերն էին ատոնք, որոնք արդէն իր համբաւը չինած էին

Սլաւ երկիրներու մէջ եւ որոնցմէ ապագայ բանաստեղծը կը գուշակուէր, երբ սիրահարութեան դէպք մը եկաւ բաւական ատենուան համար որոշ ուղղութիւն մը տալ իր արտադրութեանց :

Աղջիկ մը սիրեց, հայրենակից մը իրեն՝ Մարիլա Սէրէսցձաքա՝ դոր ինքը պարզապէս Մարիլա կ'անուանէր. եւ արդէն նշանուած ըլլալուն, հաւատարիմ մնաց ընկերական աւանդութիւններու եւ մերժեց զինքը : Միճքիէվիչ, անատեն հաղիւ քսան տարու, վերջին ծայր ազգուեցաւ այդ մերժումէն, ու երկար ատեն պահեց յիշատակը այդ անպատու, այդ գոռացած սէրին որ կենդանի օրինակութիւնն էր Վէրդերին :

Այդ ջախջախուած սէրն էր որ Բոլժոնիոյ առաւ Ծիաւիին (Նախահայր), ուր Միճքիէվիչ իր սէրին խորհրդանշանը քանդակած է ժողովրդական հին սովորութեան մը ճակատէն, միեւնոյն ատեն ամբողջ երկը իր սիրային պատմութեան մէկ ցլացուցիչը դարձնելով :

Անկէ ետքը, իր գործերուն ընդհանուր շրջանն էր այդ խորտակուած սրտի կեանքին վերյուշումը՝ որ միշտ կը կրկնուէր իր մտածումներուն եւ զգայնութեանցը մէջ :

Եւ այդ անջնջելի յիշատակը Մարիլային, որ գրեթէ միշտ կ'անթեղուէր իր մէջ, կարելի է երկար ատեն զեռ զրկէր իր էջերը, ի՞նչ երբեք դէպք մը՝ որ հիմնովին սարսեց զինքը՝ վերջ մը չի գնիր այդ երազանքի օրերուն : Քաղաքական յանցանքով մը ամբաստանուած, Միճքիէվիչ բանտին մէջ մոռցաւ Մարիլային յիշատակը, եւ երազները՝ զորս հիւսած էր անոր համար, տեղի տուին աւելի մեծ երազի մը՝ որ իր ամբողջ ապագայ կեանքը պիտի պարուրէր :

Բանտէն ետքը՝ անդաստական կեանքը սկսած է Միճքիէվիչի համար. կեանք մը՝ որու միջոցին իղձերուն չկրնալ տիրանալու ցաւը կուրծքին տակ, թափառկոտած է քաղքէ քաղք ու եկած է Բարիճ՝ Միչլէի եւ Էտկառ Քինլի ճով դասախօսելու համար : Յետոյ պաշտօնանկ եղած, տապալակած է դեռ բաւական ատեն, երգելով իր ցեղը՝ յաճախ տանջուելով Մարիլայի վերյուշումէն, եւ օրին մէկն ալ հասած է վերջը իր այս աշխարհի յոգնավաստակ ուղեւորութեանը, ու

նոյն իսկ Պօլսոյ մէջ աչքերը փակած է առ
յաւէտ :

* * * Revue encyclopedique իր վեր-
ջին թիւը (Ն. 274) գրեթէ ամբողջովին նուե-
րած է Միքսիկայի հարեւրամիայ յիշատա-
կին :

Հիւսիսի մեծ իմաստասէրը Հէնրիք Իպ-
սէն որուն գրածները եթէ իրենց գրական
զարդերէն մերկանան, բարոյականի վրայ
գրուած սարսուռն էջեր միայն կը մնան ,
ուրիշ բաներ չեն բայց եթէ ակտաբանական
անդամագիտութեան աշխատանոցի մը մէջ
անդամահատի (secteur) մը ըրած գիւտերը :
Ճիշդ այդ տպաւորութիւնը կը թողուն Իպ-
սէնի բոլոր թատերագութիւնները՝ լուրջ ըն-
թերցողի մը վրայ : Իպսէն իր ամեն տարուան
սովորութեան համեմատ, այս տարի եւս գը-
րական աշխատհին իր կազանդի նուէրը կ'ընէ
նոր թատերագութեամբ մը «Եօն Կապոնէլ
Պօքման» (John Gabriel Borkman) : Իպսէն
իր այս գործով կ'ուզէ ներկայացնել անհատ
մը որ նոր բան մը հիմնելու հիւանդութեամբը
բռնուած է : Իպսէն այդ անհատին հոգոյն բո-
լոր ալքերը կը մերկայցնէ մեր առջեւ : Եւ-
րոպական թատերադրամներուն վրայ Եօն Կապ-
ոնէլ Պօքման հասարակութիւններու հիացման
առարկան է արդէն :

* * * Աւստրիոյ Արքիդուքս Ֆրանց
Ֆէրտինանտի առաջնորդութեամբ այս օրերս
ժամանակագրական կարեւոր գործի մը հրատա-
րակութեանը պիտի սկսուի : Սոյն հեղինակու-
թիւնը, «Ֆրանց Եօգէֆ Ա. եւ իր ժամանա-
կը», որուն պիտի աշխատակցին Աւստրո-
Հունգարական կայսրութեան գրեթէ բոլոր
ծանօթ քաղաքագէտները, հեղինակները եւ
արուեստագէտները, պիտի տպագրուի Միւ-
նիքի մէջ : Ամբողջ գործին համար արդէն
բաժանորդագրութիւն բացուած է, 500
կուլտըն :

* * * Բրօֆ. Տիքսըն որ ծանօթ է իր
«In the republic of letters» անուն հեղի-
նակութեամբ, պիտի ձեռնարկէ անդլիական

գրականութեան Բօմանդիք ուղղութեան վրայ
քննադատական գործի մը :

* * * Յառաջիկայ յունուարէն պիտի
սկսի անդլիերէն մանկավարժական նոր թեր-
թի մը The school world ի հրատարակու-
թիւնը, ամիսը անգամ մը : Այս թերթը
մասնաւորապէս պատրաստուած պիտի ըլլայ
ուսուցիչներու եւ ուսուցչուհիներու համար :
Տարեկան բաժանորդագրութիւն 36 դրուշ .
կը յանձնարարենք մեր բոլոր անդլիագէտ ու-
սուցիչներուն :

* * * Բօլ եւ Վիքթօր Մարկըրիթ, Ֆռան-
սացի նրբագոյն գրագէտներէն, աւարտելու
վրայ են իրենց վերջին գործը որ «Femmes
nouvelles» անգոստ պիտի ունենայ : Մար-
կըրիթ եղբայները իրենց այս գործին մէջ
բոլորովին համոզուած կ'երևան թէ ֆռան-
սացի օրիորդներու կրթութիւնը արմա-
տական բարենորոգումներու կը կարօտի .
եւ թէ ներկայ կացութեան մէջ, անոնք բո-
լորովին անպատրաստ ամուսնական կեանքին
մէջ կը նետուին :

* * * Գերմանական ներկայ գրականու-
թեան զլխաւոր ներկայացուցիչներէն մէկը
Հէրման Զուտէրման աւարտած է նոր
թատերագութիւն մը «Die drei Reiherfedern»
(Տառեղի երեք փետուրները), որուն ներկա-
յացումները պիտի սկսին Ծ'նունդէն առաջ :
Խաղին նիւթը առնուած է հիւսիսային Գեր-
մանիայէն, Զուտէրմանի հայրենիքէն : Մա-
սիս յառաջիկայ թիւերու մէկուն մէջ պիտի
հրատարակէ ուսումնասիրութիւն մը Զու-
տէրմանի գրական գործունէութեան վրայ, ա-
տով ժամանակակից գերմանական գրական
մեծագոյն դէմքերէն մէկը մեր հասա-
րակութեանը ծանօթացնելու համար :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ե Ի

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ



Ժողովուրդներու զարգացման, քաղաքակրթութեան պատմութեան հիմը միշտ նիւթական կեանքը եղած է: Նոյն իսկ նախապատմական ժամանակներու մէջ, կամ այդ պայմաններուն տակ գտնուող հասարակութիւնները օրը օրին ապրելու տաղտուկները միայն ունին և իրենց նիւթական, եթէ կարելի է ըսել տնտեսական կեանքով, որ և է կերպով փոխադարձ յարաբերութեան մէջ չեն գտնուիր իրենց սահմանակից օտար ցեղերու հետ, բոլորովին մեկուսացած դոյութիւն մը ունին անոնք: Մեր օրերու կենդանի օրինակն է մասամբ Չինաստան, որ հաճոյակատարութեամբ չի նայիր ամեն անոնց, որոնք թէեւ օտար՝ կ'ուզեն իրեն հետ տնտեսական փոխադարձ յարաբերութեան մէջ մըտնել:

Ժողովուրդներու հետզհետէ զարգանալով, հազարդակցութեան միջոցներու դիւրանալով և բազմապատկուելով, դրակից հասարակութիւնները իրենց տնտեսական կեանքովը կը սկսին իրարու հետ յարաբերութեան մէջ մըտնել: Ասիկայ ժողովուրդներու զարգացման երկրորդ աստիճանն է: Իսկ ատկէ վեր աստիճանը որուն վրայ կը գլուխուր բովանդակ քաղաքակիրթ մարդկութիւնը, այլ եւս դրացիութիւնը չի փնտռեր իր տնտեսական կեանքովը ուրիշ ազգերու հետ յարաբերութեան մէջ մտնելու համար: Հեռագիրները, երկաթուղիները ու արագաստ շողեռները հազարդակցութեան ցանցով մը ամբողջ քաղաքակիրթ աշխարհը այսօր

իրարու կապած են, ու տնտեսապէս իրարմով է որ կ'ապրին:

Միջին դարուն, նոյն իսկ միեւնոյն կողավարութեան մէջ տարբեր քաղաքներ, տարբեր ինքնուրոյն տնտեսական կեանք մը ունէին: Շատ քիչ անգամ կը պատահէր որ երկու դրացի քաղաքներ տնտեսապէս իրարու հետ յարաբերութեան մէջ ըլլային:

Միջին դարէն վերջը անցեալ դարու մէջ, և այս դարուն սկիզբները ժողովուրդներու տնտեսական կեանքը ընդհանուր ազգային յատկանիշ մը ունի աւելի, այսինքն՝ պետութեան մը մէջ գտնուած բոլոր քաղաքները կը սկսին արդէն իրարու հետ յարաբերութեան մէջ մտնել, ու ասով ամբողջ ազգը կը ներկայացնէ հաւաքական տնտեսական կեանք մը:

Մեր օրերուն ամեն բան փոխուած է: Այսօրուան տնտեսական կեանքին յատկանիշն է, ընդհանուր համալրաշարձային ըլլալ: Այլ եւս ազգերը առանձնացած վիճակի մը մէջ չեն ապրիր տնտեսապէս, և իւրաքանչիւր քաղաքակիրթ ազգի տնտեսական կեանքը ամենանեղ կերպով կապուած է միւս բոլոր քաղաքակիրթ ազգերու կեանքին հետ:

Փոխադարձ յաւաքերութեան վրայ հիմնուած համաշխարհային տնտեսական կեանքի մը հետեւանքն է որ այսօր ամեն երկիր իր արտադրութիւններու և յատկութեանցը համեմատ ընդունած է աշխատութեան բաժանման սկզբունքը և իր արտադրութիւնները աւելի օտար հրապարակներու համար ևն քան թէ իրեն և ինքն ալ իր արտադրութիւններու փոխարէն օտար երկիրներէ կը ստանայ իր ապրուստի տնհրաժեշտ արտադրութիւնները: Գերմանիա տնտեսական այն տեսակ կացութեան մը մէջ է այսօր որ իր ժողովուրդին համար անհրաժեշտ եղած տարեկան ցորենին մի-

այն ⁵/₆ը կ'արտագրէ և մնացեալը կը ստանայ Ռուսաստանէն: Իսկ ինքը աւտոր փոխարէն, Անգլիայէն վերջ, այսօր աշխարհի ճարտարարուեստական գործարաններու երկիրն է, որ վ կըցած է նաեւ իր աստիճանական զարգացումը ապահովել: Փրանսա ամբողջ աշխարհի ծանրադէին արդուգորգերը ու նորածնւաւթիւնները կ'արտածէ, որոնց հասոյթով կրնայ այսօր հարուստ ազգերու շարքին մէջ սեպուիլ:

Անգլիա ալ իր լայնածաւալ գաղթականութիւններուն ու նաեւ ուրիշ երկիրներու հետ ամենաներոյժ յարաբերութեան մէջ է տնտեսապէս:

Ժողովուրդներու տնտեսական այս ընդհանուր կեանքը սակայն ծնունդ տուած է նոր պայմաններու սրտնց մէջ այսօր քաղաքակիրթ աշխարհը կ'ապրի: Նման արտադրութիւններ արտածող պետութիւններ օտար հրապարակներու վրայ իրարու հետ ուժգին մրցման մը ենթակայ են, եւ որպէս զի իրենց մրցակիցներուն հետ կարենան միշտ գէտ առ գէտ դանուիլ, ստիպուած են լուրջ կերպով կազմել իրենց ճարտարարուեստական արտածող կեանքը:

Նորէն Չինաստանն ու Ափրիկէն են, որոնք այսօր մասնաւորաբար Եւրոպական պետութիւններու բովանդակող շաղկերթիւնը իրենց վրայ դարձուցած են: Հիմա Եւրոպական պետութիւնները իրենց արտադրութիւնները քչելու համար նոր ու տարբեր հրապարակներ գտնելու յարկին տակն են, ու Չինաստան և Ափրիկէ իրենց 500 միլիոն բնակիչներով Եւրոպայի ճարտարարուեստական արտադրութիւններուն համար այն մեծ հրապարակն են ուր շատ մը նիւթական շահեր կը սպասեն իրենց:

Բոլոր քաղաքակիրթ երկիրներու մէջ այսօր ընդունուած է այն սկզբունքը թէ երկրի մը բովանդակ քաղաքա-

կանութիւնը գլխաւորապէս սատարողը պէտք ըլլայ տնտեսական կեանքին, զայն զայն բարդաւաճցնելու համար: Տնտեսական կեանքի բարդաւաճումն է այսօր, որ բոլոր միջոցները կուտայ, ժողովուրդներու համար քաղաքակիրթութեան ցոյց տուած կեանքի հեշտացուցիչ պայմանները ձեռք բերելու:

Այսօր քաղաքական խնդիրներու մեծագոյն մասը տնտեսական կեանքի հետեւանքն են, եւ բոլոր կառավարութիւններն ալ կը հետեւին իրենց քաղաքականութեամբ երկրին տնտեսական կեանքը աւելի զօրացնելու ուղղութեան:

Քիչ ամիսներ առաջ Սպանիոյ եւ Ամերիկայի միջեւ տեղի ունեցած պատերազմն ալ, քիչ կամ չատ, արդիւնքն էր տնտեսական կեանքի քաղաքականութեան մը: Ու այսօր հաշտութեան կնքումէն վերջ կը տեսնենք Միացեալ Նահանգները որոնք գաղթականներու խումբեր կը զրկեն դէպի Փիլիպեանները, Քուպա եւ Բորդօ-Ռիքո: Միացեալ Նահանգներու պէս ճարտարարուեստ երկրի մը համար այս բոլոր առիբը թանկագին հրապարակներ են արտածութեան:

Այսօր տնտեսական կեանքով անած քաղաքական պետութիւններու համար ամենէն ռազմագիտական ամբողջները նաեւ հանգիստներն են, ուր իրենց նաւերը կը մտնեն, բերելով իրենց հետ իրենց երկրին արտադրութիւնները:

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

ՊՈԼՍՈՅ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Պօլսոյ մէջ գտնուող այն բոլոր անձերէն, որոնք «Մասիս» կիսամսեայ հանդէսի առաջին թիւը ստացած են և կը փափաքին յաջորդ թիւերն ալ կանոնաւոր կերպով ստանալ, կը խնդրուի որպէս զի փութան մինչեւ ներկայ ամսոյս 15ը թերթին բաժանորդագիրը վճարել. Պօլսոյ ընթերցողներուն դիւրութիւն մը տալու համար բացած ենք նաեւ «Եռամսեայ բաժանորդագրութիւն» 11 զրշ.ի:

ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Գաւառներու և Առաստահմանի մէջ գտնուող ամեն անոնք որոնք «Մասիս» ի առաջին թիւը ստացած են և կը փափաքին որ նոյն թերթին յաջորդ թիւերուն առաքումն ալ շարունակուի, կը խնդրուի իրենցմէ, որպէս զի փութան, մինչեւ ներկայ ամսոյս վերջը, զրկել իրենց բաժանորդագիրնը:

«ՄԱՍԻՍ» ԿԻՍԱՄԱՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱՅՈՒՄԾ Է

ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 թիւ (768 էջ)	44 զրշ.
վեցամսեայ	12 " (384 էջ)	22 "
Եռամսեայ	6 " (192 էջ)	11 "

ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 թիւ (768 էջ)	54 զրշ.
վեցամսեայ	12 " (384 էջ)	27 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	24 թիւ (768 էջ)	12 ֆրանք
վեցամսեայ	12 " (384 էջ)	6 "

«ՄԱՍԻՍ» ԶԵՌԻԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ 2 ՂՐՇ.

«Մասիս» ի վերաբերեալ ամեն նամակ կամ դրութիւն պէտք է ուղղել թերթի տնօրէն-խմբագրին

ՄԻԶԱՅԷԼ ԾԱՍՏԱՆԺԵԱՆ

Սթամպոլ, Պապը Ալի ճատտէսի, քիւ 20
Stamboul, Avenue de la S. Porte No 20

Թերթիս կողքին վերջին երկու երեսները ազգարարութիւններու յատկացուած են: Գիններու համար գիմել Տնօրէնին, Սթամպոլ, Պապը Ալի ճատտէսի թիւ 20:

Կենցաղ և Դաստիարակութիւն Հէթողութիւն ՍԲԷՆՍԸՐ ,
 Թարգմ. Յ. Գ. Մըմբեանի , տպագրութիւն Մատթե-
 սեան , գին 10 դրշ .

Աղգային բանասէր մը կը վնտուէ Գերմանացի իրա-
 լագէտ-խմաստասէր Մոմընի Հռովմէացոյ պատմու-
 թեան ֆրանսերէն թարգմանութիւնը , կարգապահ հա-
 մար : Մէկ ամսուան վարձք պիտի վճարուի մէծիտ մը :
 Դիմել « Մասիս » ի խմբագրատունը :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐԲԻԷԼԵԱՆ

Բերա, Մեծ Փողոց բիւ 200 , Կալարա Սերային դիմաց

Կը կատարէ ահուայի վերաբաժական և արհես-
 տական ամեն տեսակ գործողութիւն : Ահուայի քա-
 շելը թմրեցուցիչ Դեղերով : Աղքատները ձրի կը դար-
 անուին : 5—1



Կ'ըսեն թէ թէյը ամառը զովութիւն
 և ձմեռը տաքութիւն կուտայ , շատեր
 թէյ խմած են և համոզուած չեն այս
 ճշմարտութեան : Թերահաւատներուն կը
 յանձնարարենք մանաւանդ Կ. ԵԱՎՐՈՒ-
 ԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ թէյի վաճա-
 ռատունը : Նոյն վաճառատունէն տուի
 մը միայն թէյ զնեղով փորձելէ վերջ պիտի համոզ-
 ուին մեր ըսածին ճշմարտութեան :

Ուշագրութիւն վաճառատան մարքային :
 Վաճառատուներ կը գտնուի ճեղք պէյ խանին տակ , բիւ 10